1) Հաստատության գործունեությունը.
2) Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.
ա/ շենքային պայմաններ
բ. հաստատության նյութատեխնիկական բազան, ռեսուրսները
գ/ կառավարման խորհրդակցական մարմինները
դ/ համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
ե/հաստատության ուսումնական միջավայրը
զ/մանկավարժական համակզմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ
է/ հաստատության կրթության որակի նկարագիր
ը/հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող տեխնոլոգիաները
թ/ հաստատության առկա հիմնախնդիրները
3) նպատակների և խնդիրների սահմանումը, սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները.
4) ռիսկերը.
5) արդյունքների գնահատման չափանիշները.
6) գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.
7) վերահսկողության մեխանիզմներ

Դպրոցի առաքելությունը

Հարափոփոխ աշխարհում կրթության փոփոխությունը դարձել է ժամանակի հրամայական ու պահանջ: Տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում ապագայի կրթական կարիքները կանխատեսելը դարձել է բավականին բարդ: Ուստի անհրաժեշտ է ունենալ կրթական ճկուն, դինամիկ զարգացող համակարգ: Դպրոցը պետք է ունենա այնպիսի առաջնորդներ ու մանկավարժներ, որոնք ունակ են նորն ընկալելու, ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համապատասխանելու:

Դպրոցում ուսանելը հասարակության բոլոր անդամների արժանապատիվ կեցության երաշխավորման կարևորագույն նախադրյալներից է:

Կրթություն ստանալը և ընտանեկան միջավայրում հասակ առնելը յուրաքանչյուր երեխայի անքակտելի իրավունքներն են՝ անկախ նրանց

կարողություններից կամ խոցելիություններից: Երեխան չի կարող լիարժեքորեն իրացնել իր ներուժը, եթե չկա բարենպաստ միջավայր: Մեր

խնդիրն է ապահովել կրթության իրավունքի լիարժեք իրացման համար նպաստավոր միջավայր:

Աշակերտները դպրոցում պետք է ձեռք բերեն այնպիսի գիտելիքներ, ունակություններ ու կարողություններ, որոնք հնարավորություն կտան ապագայի անծանոթ պայմաններում արագ կողմնորոշվել ու լինել մրցունակ, թե հայրենիքում թե հայրենիքի դահմաններից դուրս: : Վաղվա քաղաքացին և այսօրվա մեր աշակերտը պետք է առաջին հերթին սովորի ապրել, ապրել հաշտ ինքն իր ու հասարակության հետ: Պետք է ունենա քննադատական, վերլուծական, համեմատական, ստեղծագործական մտածողություն, մշտապես սովորելու ու կատարելագործվելու կարողություն, ցանկություն ու հնարավորություն:

ՀՀ Հանրակրության մասին օրենքի հոդված 4 սահմանում է.«Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը

համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և

մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

2.1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի

կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր

երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

3. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը»:

Դպրոցի առաքելությունը սովորելու ունակություն ունեցող, սովորելն արժևորող քաղաքացիներ պատրաստելն է, ազգային հենքի

վրա կրթական ոլորտի օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին համապատասխան կրթական ու դաստիարակչական

աշխատանքների որակյալ իրականացումն է:

Դպրոցի կառավարումը, դպրոցում աշխատելը պահանջում է անսահման նվիրում, մեծ պատասխանատվություն: Դպրոցն այն

ամրոցն է , որի ամրությունն ու անխոցելիությունը ապագայի հզոր հայրենիքի գրավականն է: Այստեղ է կերտվում հայրենիքի ուժը,

զարգացման առաջնահերթությունն ու ապագայի իրական տեսլականը

1. **Հաստատության գործունեությունը:**

Վանաձորի Պ. Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրական կազմակերպություն է: Հաստատությունն իր գործունեությունը ծավալում է ղեկավարվելով.

- «Կրթության մասին»,
- «Հանրակրթության մասին»,
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»
- « Աշխատանքային օրենսգրքով»,
- դպրոցի կանոնադրությամբ,
- օրինակելի իրավական ակտերի՝ հաստատության հաստատած տարբերակներով,
- ներքին իրավական ակտերով,
- նորմատիվ այլ փաստաթղթերով

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է, իսկ նպատակը՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների և կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովումն է՝ յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան: Դպրոցը նախկինում գործել է որպես վարժարան, իսկ 2003թ. «Դպրոցների բարելավման» ծրագրի շրջանակներում Վանաձորի թիվ 1 և թիվ 2 վարժարանները միավորվել են, և ձևավորվել է Պ. Տիչինայի անվան N 20 միջնակարգ, այժմ՝ հիմնական դպրոցը: Այսպիսով, դպրոցն իրավահաջորդն է հանդիսանում Վանաձորի Ս. Աբովյանի անվան թիվ 1 վարժարանի և Վանաձորի թիվ 20 միջնակարգ դպրոցի:

2023թ մարտից դպրոցն անցել է կառավարման նոր մոդելի, ինչն իր հետ բերում է և նոր հնարավորություններ և նոր մարտահրավերներ: Մինչ վերջերս դպրոցի կանոնադրության փոփոխություն հնարավոր չէր իրականացնել օրենսդրական կարգավորումների պատճառով ինչը դպրոցի գործունեության համար լրացուցիչ բարդություններ էր առաջացնում ՝ դպրոցի կանոնադրության և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դրույթների անհամնապատասխանության պատճառով: Ելնելով օրենսդրական փոփոխությունների տրամաբանությունից դպրոցի տնօրենությունը փորձել է ապահովել կրթական որակյալ

ծառայությունների անխափան տարամդրումը: Դպրոցի ամենօրյա գործունեությունն ուղղված է յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության խթանմանն ու  կրթական որակյալ ծրագրերի իրագործմանը:

Այս զարգացման ծրագիրը կազմվել է հաշվի առնելով ինչպես վերջին տարիների ներքին և արտաքին գնահատումների արդյունքները, վերլուծությունները՝ այնպես էլ վերջին ամիսներին դպրոցի առջև ծառացած նոր մարտահրավերները: Բարեփոխումների, արմատական փոփոխությունների կայացումը  պայմանավորված է ոչ միայն լավ մշակված օրենսդրական պահանջներով, այլ նաև գիտակցված ու հետևողական իրագործմամբ: Ուստի այս փուլում շատ կարևոր է դպրոցի տնօրենության , ուսուցչկան համակազմի, ծնողական համայնքի, աշակերտական համակազմի միջև համագործակցային և մասնակցային միջավայրի ստեղծումն ու միասնական նպատակի իրագործումը:

Զարգացման ծրագրի վերաբերյալ հանդիպումները դպրոցի խորհրդակցական մարմիններում փաստում են, որ անելիքները շատ են և պահանջում են պատասխանատու մոտեցում և հստակ պլանավորում:

Դպրոցն այժմ էլ գործում է նախկին մանկապարտեզի շենքում՝ Մյասնիկյան 7 ա հասցեում: Դպրոցին հատկացված շենքը չի համապատասխանում տիպային դպրոցներին ներկայացվող պահանջներին և  հիմնական դպրոցի կրթական կարիքների լիարժեք բավարարմանը: Դպրոցում ուսումնառությունը կազմակերպվում է երկհերթ: Դպրոցի շենքային պայմանների բարելավման ուղղությամբ պետական աջակցության անհրաժեշտություն կլինի:

Սակայն դպրոցը բարեկարգ է, մասնակի վերանորոգված և հնարավորինս հարմարեցված: Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը 379-ն է: 2023-2024 ուսումնական տարեսկզբին դպրոցում սովորում են 383 աշակերտ՝ ընդ որում տարրական հանրակրթական լիցենզիայով սահմանված տեղերը 161 են և տարրական օղակում սովորում է 161 աշակերտ: Այսինքն այս պահին սահմանված տեղերը գերազանցում են հիմնական հանրակրթական աստիճանում: Վերջին երկու տարիներին աշակերտների թիվը հասկանալի պատճառով նվազում է: Թույլատրելի տեղերի  քանակին համապատասխանեցումը ենթադրում է առաջիկայում ևս աշակերտների թվի նվազում: Անհրաժեշտ է նշել, որ դպրոցը գտնվում է  Վանաձոր քաղաքի կենտրոնական, խիտ բնակեցված հատվածում և դպրոցում սովորելու ցանկություն ունեցողների հոսքն ավելին է , քան թույլ են տալիս դպրոցական շենքի ֆիզիկական հնարավորություններն ու դպրոցի կրթական լիցենզիայով սահմանված տեղերը: Համայնքի բնակչության շահերից է բխում դպրոցի շենքի ֆիզիկական հնարավորությունների ընդլայնումը և սահմանային տեղերի ավելացումը:

Երկհերթ ուսումնական գործընթացի իրականացումը առաջացնում է լրացուցիչ դժվարություններ բոլոր շահառուների համար: Ուստի, առաջնահերթ կանրորություն կա  դասասենյակների ավելացման, լաբորատորիայի համար տարածք հատկացնելու, հետագայում առարկայական դասասենյակների կահավորման  հնարավորություն ստեղծելու համար: Այս կարևոր և անհրաժեշտ պահանջների կատարման համար անհրաժեշտ է կամ շենքի հիմնանորոգում կամ տիպային դպրոցի կառուցում: Այս և մի շարք այլ խնդիրների լուծման համար միայն տնօրենության ջանքերը բավարար չեն և անհրաժեշտ է համակարգային մոտեցում, կառավարության որոշում:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից: Նոր ներդրվող չափորոշչային պահանջները նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը: Ըստ այդմ անհրաժեշտ է.

- յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքներին հարմարեցված միջավայր
- լաբորատոր գույքով և նյութերով հագեցած լաբորատորիա
- Հարմարեցված սանհանգույցներ, լայն միջանցոներ, թեքահարթակներ, ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար հարմարեցված և կահավորված սենյակ
- Երկրորդ համակարգչային սենյակ, քանի որ սովորողների  թվային և մեդիա կարողունակությունների ձևավորման անհրաժեշտությունը թե տարրական , թե հիմնական կրթական աստիճաններում դառնում է առաջնահերթություն:  Եվ միայն մեկ դասասենյակը, այն էլ դասարանների աշակերտների  միջին խտությունից քիչ քանակով տարբեր մաշվածության համակարգիչներով, չեն կարող ապահովել հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները
- Մարզադահլիճ և/կամ մարզադաշտ /մարզադահլիճի բացակայությունը լուրջ անվտանգային խնդիրներ է ստեղծում և հնարավորություն չի տալիս հասնել առարկայական սահմանված վերջնարդյունքներին;'
- Առարկայական դասասենյակներ՝ համապատասխան դիդակտիկ նյութերով, հարմարավետ գույքով:

Նոր ուսումնական տարվանից դպրոցում առկա է հարմարավետ և բարեկարգ ուսուցչանոց, փոքրիկ  լաբորատոր տարածքը ապահովված է ջրով:

Մինչփ 2023թ սեպտեմբեր դպրոցի 33 ուսուցիչների, 2 փոխնօրենների համար ուսուցչանոցին հատկացված տարածքը կազմել է 12,8 մ², այժմ ուսուցչանոցի տարածքը կազմում է ՝ 34,8 մ²: Ուսուցչանոցն ապահովված է անհրաժեշտ գույքով, ինտերնետ կապով, համակարգչով և պատճենահանող սարքով:

Դպրոցում կա 14 դասասենյակ, մեկ համակարգչային սենյակ, մեկ Արմաթ լաբորատորիա, , խոհանոց, ճաշարան սննդի պահեստ, գրադարան, մեկ միջոցառումների դահլիճ / որը ծառայում է նաև որպես սպորտդահլիճ՝ հարմարեցվում է, կահավորվում թենսի սեղաններով և շվեդական պատով/, վարչական 3 սենյակ, 2 սանհանգույց առաջին հարկում, ևս 3-ը՝ երկրորդ հարկում, երկու պատշգամբ: Առաջին հարկում պատշգամբը կահավորվել է որպես բացօթյա դասասենյակ, երկրորդ հարկում պատշգամբը ծառայում է որպես պահեստ: Պահեստային կամ նկուղային տարածքի բացակայության պայմաններում պատշգամբի նման կիրառությունը նաև անվտանգային խնդիրներ է ստեղծում: Պարբերաբար աշխատանքներ են իրականացվում գույքից պատշգամբի տարածքը ազատելու ուղղությամբ: Դպրոցի շենքային պայմանների մասին ավելի հստակ կարելի է պատկերացում կազմել հետևյալ աղյուսակի միջոցով.

| *Առաջին հարկ* | | *Երկրորդ հարկ* | |
|---|---|---|---|
| *Տարածքի անվանումը* | *Չափը ՝ մ²* | *Տարածքի անվանումը* | *Չափը ՝ մ²* |
| Պատշգամբ | 56.7 | Աշխատասենյակ 2 | 18,9 +4,3 |
| Աշխատասենյակ 1 | 12.8 | Ընդունարան | 18.7 |
| Ճաշարան | 79.35 | Դասարան 7 | 37.5 |
| Դահլիճ | 89.9 | Արմաթ լաբորատորիա | 34.73 |
| Բուժկետ | 9.4 | Համակարգչային | 38.10 |
| Սպորտգույքի սենյակ | 10.5 | Լաբորատորիա | 16.6+5.8 |
| Գրադարան | 18.5 | Ուսուցչանոց | 34.8 |
| Պահեստ | 12.3 | Աշխատասենյակ 3 | 10.5 |
| Դասասենյակ 1 | 37.8 | Դասարան 8 | 31.3 |
| Դասասենյակ 2 | 36.4 | Դասարան 9 | 25.7 |
| Դասասենյակ 3 | 37.5 | Դասարան 10 | 31.4 |

| | | | |
|---|---|---|---|
| Դասասենյակ 4 | 31.24 | Դասարան 11 | 31.4 |
| Դասասենյակ 5 | 31.4 | Դասարան 12 | 31.4 |
| Դասասենյակ 6 | 31.3 | Դասարան 13 | 30.9 |
| Միջանցք 1 | 31.1 | Դասարան 14 | 32.7 |
| Մուտք | 10.8 | Միջանցք | 31.7 |
| Դահլիճի նախասրահ | 10 | Պատշգամբ | 104.16 |
| Միջանցք 2 | 23.1 | Ձենքի սենյակ | 5 |
| Սանհանգույց 1 | 4.89 | Սանհանգույց 3 | 5 |
| Սանհանգույց 2 | 7+4.8 | Սանհանգույց 4 | 5 |
| | | Սանհանգույց 5 | 4.48 |

Սանհանգույցները թեպետ նորոգված են սակայն հարմարեցված չեն և կարիք կա նորոգման ու հարմարեցման:

Ընդահնուր առմամբ նաև աշակերտական գույքի նորացման կարիք ունի դպրոցը: Տարրական դասարաններից միայն մեկն է տարիքին համապատասխան հարմարավետ գույքով ապահովված: 2023թ ամռանը իրականացվել է 5-9 –րդ դասարաններին հատկացված դասասենյակների աշակերտական գուքի եզրային հատվածների մշակում, մասնակի բարելավվել է գույքի վիճակը, սակայն ակնհայտ է գույքի փոխարինման անհրաժեշտությունը: Նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի վերլուծությամբ ստորև ներկայացված են առկա իրավիճակը և իրավիճակի բարելավման վերլուծությունները:

Դպրոցն ունի անցած ուսանելի ճանապարհ, բարձր վարկանիշ՝ շնորհիվ մանկավարժական որակյալ կադրերի, ավանդույթներ, որնք պահպանման ու վերակնգնման են արժանի: Մրցունակ է: Սակայն անհրաժեշտություն կա համագործակցությունների ընդլայնման, նոր գաղափարների, ստեղծագործ մոտեցումների, միջազգային ու հանրապետական, մարզային ու համայնքային իրադարձություններին, գիտաժողովներին, քննարկումններին, կրթական իրադարձություններին առավել ակտիվ մասնակցության:

Դպրոցում աշխատում են փորձառու և նվիրյալ աշխատակիցներ, սակայն կա նաև  կադրային ճկուն քաղաքականության, պարբերաբար որակյալ կադրերով աշխատանքային թիմը համալրելու անհրաժեշտություն:




Տարիքային բաշխվածությունը գրեթե անփոփոխ պահպանվել է նաև 2023-2024 ուստարվա սկզբին: Ուսուցիչների փորձառությունն ու գիտելիքներն անվիճելի առավելություններ են, սակայն նորարական  մոտեցումներ կիրառելը, ժամանակի հրամայականներին հետևելը երբեմն դժվար է իրագործել:

**Ստորև ներկայացվում է դպրոցի ներկազմակերպական կառուցվածքը.**

1. Կառավարման խորհուրդ՝ բաղկացած 9 անդամներից

2.Առարկայական մեթոդական միավորումներ՝

ա/հումանիտար և հասարակագիտական առարկաների

բ/բնագիտամաթեմաթիկական

գ/տարրական կրթության

3.Մանկավարժական խորհուրդ՝բաղկացած 45 անդամից

4.Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 18 անդամից

5.Աշակերտական խորհուրդ՝ բաղկացած 16 անդամից

6.Տնօրեն-1

8. Տնօրենի տեղակալ-1

9. Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող

10. Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող 1

11. Հոգեբան

12. ՌԻսուցչի օգնական-6

13. Ջինդեկ-1

14. Գլխավոր հաշվապահ-1

| **ՈՒսումնաօժանդակ անձնակազմ** |
|---|
| Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ-1 |
| Գործավար-2 |
| Գրադարանավար-1 |

| | |
|---|---|
| Քաղպաշպանության շտաբի պետ | |
| Լաբորանտ-1 | |
| Էլեկտրոնային դասավանդման ապահովման մասնագետ 1 | |
| Պահակ-3 | |
| Ցերեկային պահակ 1 | |
| Հավաքարար-3 | |
| Այգեպան / բացառությամբ ձմեռային ամիսների/ | |
| Ջեռուցման համակարգի սպասարկման մասնագետ | (3մ x 4ամ) |

Դպրոցի կառավարման մարմիններն են՝ ՀՀ Կառավարությունը, ՀՀ Լոռու մարզպետարանը, կոլեգիալ կառավարման մարմինը ՝ խորհուրդը /բաղկացած է 9 անդամներից/, և գործադիր մարմինը ՝ ի դեմս տնօրենի / ներկա պահին՝ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար/ և վարչատնտեսական մասի համակարգողի: Վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթներն ու լիազորությունները թեպետ հստակ սահմանված են , սակայն աշխատանքի ընթացքում տարբեր չկարգավորված հարցեր են առաջանում և տնօրենի միջամտությունը այդ խնդիրների կարգավորմանը դառնում է անհրաժեշտություն: Օր՝ տարբեր պետական և ոչ պետական կառույցներ իրավաչափ են համարում միայն տնօրենի կողմից վավերացված փաստաթղթերը, չնայած որ դրանք գտնվում են վարչատնտեսական մասի համակարգողի կառավարման ոլորտում, ուստի՝ դպրոցի շահերից ելնելով իրավիճակային լուծումներ են տրվում:

Դպրոցում գործող խորհրդակցական մարմինների հետ աշխատանքներն իրականացվում են հերթական և արտահերթ ռեժիմներով, մասնակցային ու հմագործակցային եղանակներով: Դպրոցում գործում են հետնյալ խորհրդակցկան մարմինները.

1. Կառավարման խորհուրդ

2. Մանկավարժական խորհուրդ
3. Աշակերտական խորհուր
4. Ծնողական խորհուրդ
5. Առարկայական մասնախմբեր:

1. Կառավարման խորհրդի անդամները ակտիվ մասնակցություն ունեն ինչպես խորհրդակցական մարմնի լիազորություններից բխող աշխատանքների իրականացմանը, այնպես էլ՝ դպրոցի կազմակերպչական, կրթադաստիարակչական տարբեր միջոցառումներում: Կառավարման խորհրդի անդամները գործում են համաձայն խորհրդի աշխատաարգի և ժամանակացույցի: Պարբերաբար խորհրդի քննարկմանն են ներկայացվում ուսումնական հաստատությանն առնչվող կարևոր թաստաթղթեր՝ օրինակ ֆինանսական հաշվետվություններ / վարչատնտեսական մասի համակարգող/, ուսումնադաստիարակչական աշխատանքային պլաններ, հաշվետվություններ, մանկավարժահոգեբանական աջակցությունների կարիք գնահատման արդյունքներ, ներքին կարգապահական կանոնները ներքին և արտաքին գնահատման արդյունքները նայլն: Կառավարման խորհրդի նիստերն իրականացվում են և հեռավար և առկա ձևաչափերով:
2. Մանկավարժական խորհուրդը բաղկացած է ուսումնական հաստատության բոլոր ՝ 45 մանկավարժական աշխատողներից: Մանկավարժական խորհուրդը քննարկում է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված հարցերը՝ առավելապես հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, սովորողների առողջության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանների, կրթության որակի ապահովման հետ կապված հարցերը: Մանկավարժական խորհրդի նիստերի մասին դահմանված ժամկետներում մասնակիցները ծանուցվում են, նիստերը բաց են խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողների համար:
3. Աշակերտական խորհուրդը կարևոր ու առանցքային դերակատար պետք է լինի ինչպես ժողովրդացարական արժեքների կրթման գործնական կիրառության համար, այնպես էլ՝ որպես խորհրդակցական մարմին, որը ներգրավված է դպրոցական կյանքի կարևորագույն որոշումների ընդունմանը: Կարևոր է աշակերտական խորհրդի ձևավորման թափանցիկությունը, աշակերտական խորհրդի անդամների իրազեկվածությունն ու գրագիտությունը, հետաքրքրվածությունն ու մասնակցություն ունենալու կամքը: Այս ուղղությամբ իրականացվում են և նախատեսվում են իրականացնել զրույցներ , քննարկումներ, իրավական գրագիտության բարձրացման աշխատանքներ:

4. Ծնողական խորհուրդը ձևավորվում է սահմանված կարգով , գործուն մասնակցություն է ունենում դպրոցի կյանքում: Ըստ անհրաժեշտության հրավիրվում են դասարանական , դպրոցի և համադպրոցական՝ ընդհանուր ծնողական խորհրդի նիստեր: շատ կարևոր է առողջ համագործակցային մթնոլորտի ապահովումը: Կարևոր է նաև , որ ծնողխորհուրդը գիտակցի իր դերն, իմանա իր հնարավորությունները և բացի պահանջատիրական կեցվածքից հանդես գա նաև աջակցողի, նախաձեռնողի ու մասնակցի դերում:
5. Դպրոցում գործում են երեք առարկայական մասնախմբեր: Բոլոր ուսուցիչներն ընդգրկված են առարակայական մասնախմբերում: Մանսախմբերի գործունեությունը շատ կարևոր է հատկապես կրթական բարեփոխումների այս ժամանակաշրջանում, քանի որ ուսուցիչներին ատավել հաճախ է անհրաժեշտ լինում իրավական և մեթոդական աջակցություն ցույց տալ: Ռնօրենությունը պարբերաբար իրազեկում է մասնախմբերի նախագահներին նորարարությունների մասին, խրախուսում է ուսուցիչների մասնակցությունն ու ակտիվությունը, մասնակցում է առարակայական մասնախմբերի նիստերին: Վերհանված հարցերն ըստ հնարավորության լուծում են ստանում, ըստ անհրաժեշտության ՝ քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստեում:

Կրթական գործընթացի մասնակիցներն ունեն առաքելություն՝ ստեղծելու բարենպաստ կրթական միջավայր, համագործակցելու, դպրոցի առօրյան առավել հագեցած դարձնելու, նախաձեռնություններով հանդես գալու:

Դպրոցը բացի պարտադիր համագործակցություններից պետք է ձգտի ընդլայնել միջդպրոցական, ներհամայնքային, ներպետական ու միջազգային համագործակցությունները ՝ հանուն կրթության բազմազանության ու որակի:

Այսպիսով կրթական գործունեության իրագործման ընթացքում սույն զարգացման ծրագրով նախատեսվում է.

- Ապահովել յուրաքանչյուր սովորողի մտավոր, ֆիզիկական և սոցիալական բնականոն զարգացումը
- Քայլեր ձեռնարկել արժանապատիվ, առանց բռնության ու անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ
- Յուրաքանչյուրի ընդունակություններին, կարողություններին առողջությանը համապատասխան՝ հարմարեցված միջավայրով ապահովում՝ ըստ հնարավորության
- Դաստիարակել ապազայի հստակ տեսլական ունեցող քաղաքացիներ: Կարևորել առողջ ապրելակերպի ու մասնագիտական կողմնորոշման ուղղված ձեռնարկումները

- Կարևորել մնայուն արժեքների գիտակցումը, ձևավորել  հայրենասիրություն, հարգանք ազգային և համաշխարհային մշակութային արժեքների նկատմաբ
- Կարևորել ամուր ընտանիքների, հանդուրժողականության ու հարգանքի դերը

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորված գործողությունների ու ներդրումների միասնական համալիր է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների ու խնդիրների իրագործմանը, միջազգային ու ազգային կրթական պահանջների բավարարմանը: Չնայած ներկայացված զարգացման ծրագրերի վերաբերյալ բացասական եզրակացություններին՝ անգամ այդ կարևոր փաստաթղթի բացակայության պայմաններում դպրոցը  շարունակում է նախանշված նպատակների ու խնդիրների իրագործումը:

1. **Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| **1. Շենքային պայմաններ**<br><br>➢ Բարեկարգ , նորոգված դասասենյակներ<br>➢ Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար<br>➢ Լոկալ ջեռուցման համակարգի առկայություն, դասարաններում պահանջվող ջերմաստիճանի ապահովման հնարավորություն<br>➢ Մշտական ջրով ապահովվածություն և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման | **1. Շենքային պայմաններ**<br><br>➢ Դպրոցի շենքը ոչ տիպային է, նախկինում եղել է մանկապարտեզի շենք<br>➢ Մարզադահլիճի բացակայություն<br>➢ Բակային տարածքը, որը տաք եղանակային պայմաններում ծառայում է որպես մարզադաշտ, հողածածկ է, չկահավորված, տարածքն առանձնացված չէ և անհարամար է ֆիզկուլտուրայի դասերի կազմակերպման համար: Տարածքի վրայով անցնում են հաստ էլեկտրական մալուխներ, որոնք կարող են վտանգավոր լինել: |

| | |
|---|---|
| հնարավորություն<br>➢ Կահավորված և բարեկարգ ուսուցչանոցի առկայությունը: Այն հարմար է և աշխատելու և հանգստանալու համար: Ուսուցչանոցն ապահովված է ինտերնետ կապով և համակարգչով:<br>➢ Բակային տարածքի՝ նստարաններով և աղբարկղերով կահավորվածությունը /Վանաձորի համայնքապետարանի աջակցությամբ /<br>➢ Չնայած որ դպրոցի շենքը նկուղային տարածք չունի, դպրոցի և համայնքապետարանի համագործակցության արդյունքում հարևանությամբ գտնվող ապաստարանը `ըստ նշանակության օգտագործելու հնարավորություն է տրվել: | ➢ Ուսումնական հաստատությունում սովորողների թիվը գերազանցում է լիցենզիայով սահմանված սահմանային տեղերը և ուսումնական հաստատության դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը մասնակի է համապատասխանում առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:<br>➢ Փոխտնօրենների, վարչատնտեսական մասի համակարգողի աշխատասենյակների ոչ հարմարավետությունը:<br>➢ Կահավորված պահակակետի, տեխնիկական սպասարման համար անհարժեշտ նյութերի համար նախատեսված առանձնացված տարածքի բացակայությունը:<br>➢ Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված սանհանգույցների բացակայությունը, երկրորդ հարկ տանող թեքահարթակների բացակայությունը:<br>➢ Ժամանակակից պահանջներով կահավորված լաբորատորիաների, առարկայական սենյակների բացակայությունը:<br>➢ ՆԶՊ առարկայական կաբինետի, շախմատի դասասենյակի՝ որպես դասասենյակ օգտագործելը:<br>➢ Պահեստային մասին խիստ փոքր լինելը: Վերջինիս պատճառով չօգտագործվող գույքը տեղադրված է երկրորդ հարկի պատշգամբային հատվածում, որը լրացուցիչ ռիսկեր է առաջացնում: |

| | |
|---|---|
| **2. Նյութատեխնիկական բազան**<br><br>➢ Գրադարանում այս պահին կա 1788 անուն գիրք՝ հիմնականում հայալեզու և ռուսերեն<br>➢ 2023-ին դտեղծվել է գրադարանի գրքերի էլեկտրոնային անվանացանկը, ինչը հնարավորություն է տալիս գրադարանային ֆոնդին ավելի հեշտ ծանոթանալ:<br><br>➢ Գրադարանի գրքերի հասանելիությունը աշակերտներին, ըստ բնագավառների դասավորվածությունն ու փոքրիկ, բայց հարմարավետ ընթերցասրահը:<br><br>➢ Համակարգչային սենյակի, համակարգիչների առկայություն: Համակարգչային սենյակի համակարգիչների թիվը 20-նն է, սակայն ոչ բոլոր համակարգիչներն են բավարարում ուսումնական պահանջները: Կան երեք դյուրակիր համակարգիչներ ՝ դասարաններում օգտագործելու համար հարմար: Կա աշխատանքային գրաֆիկ, որն օգնում է համակարգչային սենյակի նպատակային օգտագործմանը, ինֆորմատիկա առարկայի դասերից ազատ ժամանակ այլ առարկաների համար դասասենյակի օգտագործմանը: | **2. Նյութատեխնիկական բազան**<br><br>➢ Գրքերի զգալի մասն արդեն ոչ ծրագրային են: Ժամանակի հրամայականն է գրականության թարմացումը, ինչպես նաև դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզվով՝ անգլերենով ուսումնական նյութերի և գրքերի ձեռքբերումը:<br>➢ Գրադարանի տարածքի փոքր լինելը, նստատեղերի քչությունը: Երբեմն գրադարանի տարածքը՝ ըստ անհրաժեշտության որպես դասասենյակ օգտագործելը: Գրադարանի ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված չլինելը:<br><br>➢ Դասարաններում համակարգիչների /14 հատ համացանցին միացված,անվտանգության համակարգերով ապահովված/ տպիչ սարքերի անհրաժեշտ քանակի բացակայությունը կամ համակարգչային տեխնիկայի մաշվածությունը: Առաջնահերթ խնդիր է դյուրակիր համակարգիչների թվի ավելացումը և էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերումը:<br><br>➢ Առարկայական դասասենյակների, լաբորատորիաների, |

| | |
|---|---|
| ➢ Արմաթ ինժեներական լաբորատորիայի առկայությունը՝ համապատասխան գույքով :<br><br>➢ Մարզագույքի որոշ տեսակերի առկայությունը՝ թենիս սեղաններ և խաղի համար անհրաժեշտ այլ պարագաներ, շվեդական պատ, գնդակներ, ցատկապարաններ, մարզական շապիներ, որոնց մեծ մասը մարզական միջոցառումներում թիմային հաղթանակների արդյունքում են ձեռքբերվել:<br>➢ Ինտերնետ կապով հնարավորինս ապահովվածությունը:<br><br>➢ Տարրական դասարաններն ապահովված են մասգնիսական և մարկերային գրատախտակներով:<br><br>➢ Հանդիսությունների սրահը հարմար է միջոցառումների համար, ապահովված է աթոռներով և թենիսի շարժական սեղաններով՝ ֆիզկուլտուրայի դասաժամերի անցկացման | լաբորատոր անհրաժեշտ գույքի բացակայություն:<br><br>➢ Մարզագույքի բացակայությունը՝ հատկապես աշակերտական խորհուրդը կարևորում է բասկետբոլի կամ վոլեյբոլի համար անհրաժեշտ կահավորմամբ բակային տարածքն ապահովելու հարցը:<br><br>➢ Բոլոր դասարանների ինտերնետ կապով ապահովվածության բացակայությունը՝ հատկապես նոր չափորոշչային պահանջներից ելնելով խնդիրը դառնում է անհետաձգելի / QR կոդեր, դասագրքեր, ուսումնական էլեկտրոնային նյութեր/<br><br>➢ Անհրաժեշտություն կա, մագնիսական, մարկերային և սովորական աշակերտական որակյալ գրատախտակների՝ թվով 9 հատ:<br><br>➢ Տարրական դասարաններում անհրաժեշտ է 6 հատ գրատախտակ՝հորիզոնական և վանդակավոր գծանշումներով:<br><br>➢ Հանդիսությունների սրահում օգտագործվող աշակերտական աթոռները ենթական են փոխարինման: Ուսուցչական աթոռների նորացման անհրաժեշտություն ևս կա՝ 14 հատ: |

| | |
|---|---|
| համար: | ➢ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական , ուսումնական, ըստ կարիքի միջոցների և սարքավորումների բացակայություն: ԿԱՊԿՈՒ աշակերտների տեղաշարժման համար շենքի անհարմարությունը: ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքներ իրականացնելու համար հարմարեցված դասասենյակ: |
| ➢ Բարեկարգ ճաշարանի, սպասքով ապահովված խոհանոցի առկայությունը: | ➢ Ճաշարանում տեղադրված են աշակերտական հնամաշ սեղաններ և աթոռներ , որոնք հրատապ փոխարինման կարիք ունեն: Անհրաժեշտ է 12 սեղան, 48 աթոռ: |
| ➢ Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան ներառում է սովորողների համար անհրաժեշտ տարածքներ,կառույցներ,ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,համակարգչային դասարաններ, որոնց մասին հանգամանալից շարադրված է և հաստատության գործունեության նկարագրում և ուժեղ և թույլ կողմերի վերլուծության ընթացքում և նպատակներ բաժնում: | ➢ Նյութատեխնիկական բազայի համալրմանն հարցերով դպրոցի տնօրենությունը համագործակցում է համայնքի, լիազոր մարմնի հետ, պլանավորում առաջնահերթ կարիքների ապահովումը: |
| **3. Կառավարման և խորհրդակցական մարմիններ** | **3. Կառավարման և խորհրդակցական մարմիններ** |

| | |
|---|---|
| ➢ **Դպրոցում ապահովված են** ժողովրդավարական կառավարման սկզբունքները, դպրոցում գործող խորհրդակցական մարմիններն ակտիվորեն ներգրավված են կառավարման գործընթացում: Գործում են կառավարման, մանկավարժական աշակերտական և ծնողական խորհուրդները, առարկայական մեթոդական միավորումները:<br>➢ **Կառավարման կոլեգիալ մարմնի**՝ խորհրդի բոլոր անդամներն ունեն բարձրագույն կրթություն, համագործակցում են համայնքի, դպրոցի տնօրենության և մյուս խորհրդակցական մարմինների անդամների հետ, պատրաստակամ են ստեղծել արդյունավետ աշխատանքային միջավայր, սատարել ընթացիկ խնդիրների լուծմանը: Կառավարման խորհուրդը գործում է հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան: Վարչատնտեսական մասի համակարգողի կողմից անհրաժեշտ հաշվետվությունների / ֆինանսական, ներքին գնահատման/ հնարավորություն են տալիս տնօրենին կենտրոնանալ ուսումնադաստիարակչական մասի և մանկավարժահոգեբանական աջակցության խնդիրների ներկայցման վրա: | ➢ Երբեմն խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության պակաս:<br>➢ Շրջանավարտների խորհրդի բացակայություն:<br>➢ Խորհուրդների գործունեության հաշվետվողականության պակաս:<br><br>➢ Խորհրդի անդամի գործառույթների վերաբերյալ իրազեկվածության, օրենսդրական փոփոխությունների մասին պակաս ինֆորմացված լինելը: |

| | |
|---|---|
| ➢ **Մանկավարժական խորհուրդը** սահմանված ժամկետներում, երկամսյա պարբերականությամբ իրականացնում է հերթական նիստեր, ինչպես նաև ըստ անհրաժեշտության արտահերթ նիստեր: Ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը ուսումնական հաստատության ռեժիմը և այլ կարևորագույն հարցեր քննարկվում և հաստատվում են մանկավաժական խորհրդում: Կարևորվում է մանկավարժական խորհրդի անդամների ակտիվ մասնակցությունը քննարկումներին, առաջարկների ներկայացումը, տեղեկացվածությունը: ըստ անհրաժեշտության կազմակերպվում են սեմինարներ, քննարկումներ, վեր են հանվում մանկավարժական համակազմի առջև ծառացած խնդիրները:<br>➢ Աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին:<br>Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ | ➢ Իրավական ակտերի փոփոխություններին, իրենց լիազորություններին, իրավունքներին ու պարտականություններին ոչ լիարժեք տիրապետելը:<br>➢ Տեղեկատվական հարթակների բազմազանության մեջ ոչ ճիշտ կողմնորոշվելը:<br><br>➢ Աշակերտական խորհուրդը կարող է լինել առավել նախաձեռնող, ստեղծագործ և ակտիվ ներգրավվել նաև ներհամայնքային կյանքին:<br>➢ Աշակերտների ներգրավվածության պակաս դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակմանը: |

| | |
|---|---|
| անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Սահմանված կարգով գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:<br>➢ Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը՝ հստակ օրակարգերով: Հաճախակի են ծնողխորհրդի և մանկավարժական աշխատողների հանդիպումները, իրազեկման և տեղեկատվական միջոցառումները:<br>➢ Խորհրդակցական մարմինների գործունեության համար ստեղծված են նպաստավոր պայմաններ, պարբերական հանդիպումների միջոցով ապահովվում է հնարավորությունը բարձրաձայնելու ծառացած խնդիրները, համատեղ ջանքերով գտնելու դրանց լուծումները: | ➢ Թերի է ծնողների գործուն մասնակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ներհամայնքային միջոցառումներին: Անհրաժեշտ է խթանել նաև ծնողների նախաձեռնողականությունը:<br>➢ Ծնողների թյուր կարծիքն այն մասին, որ մասնակցել նշանակում է՝ պահանջել: |

| | |
|---|---|
| **4. Հաստատության համագործակցությունը համայնքի և կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:**<br><br>➢ Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը: Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին, համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:<br>➢ Համայնքապետարանը ևս մասնակցում է դպրոցական կյանքին, ընթացք տալիս իր լիազորությունների շրջանակներում գտնվող հարցերին: Օր՝ տեղադրվել են նստարաններ և աղբամաններ դպրոցի բակային հատվածում: Ընթացքի մեջ են համայնքապետարանի կարգավորման տիրույթում գտնվող մի քանի հարցերի քննարկումները:<br>➢ Դպրոցը կատարում է Լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի օրենքին չհակասող հանձնարարականները, մասնակցում, քննարկումների, մասնակցում մարզային կրթական անցուղարձին:<br>➢ ՀՀ կրթության տեսչական մարմնի ստուգումների արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են դպրոցում առկախնդիրների վերհանմանը, թերությունների շտկմանը: | **4. Հաստատության համագործակցությունը համայնքի և կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:**<br><br>➢ Դպրոցի առանձնահատկություններից ելնելով՝ երբեմն առաջադրված խնդիրների դժվար իրագործելիությունը:<br><br>➢ Դպրոցի համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը միջազգային, հանրապետական, մարզային, ներհամայնքային դպրոցների հետ:<br>➢ Ինտերնետ հասանելիության խնդիրները դպրոցում խանգարում են առավել շատ առցանց խորհրդատվությունների մասնակցել, կամ մենթորական գործունեություն նախաձեռնել ՝ գյուղական դպրոցներում ուսուցիչների բացակայության բացը լրացնելու և ներպետական համագործակցությունները ընդլայնելու նպատակով:<br>➢ Փոխադարձ այցելությունների, «Իմ կյանքը համայնքում» ծրագրի և նախաձեռնող խմբերի ջանքերով համագործակցությունների ընդլայնման անհրաժեշտություն կա: |

| | |
|---|---|
| ➢ Ուսուցիչներն ու տնօրենությունը ընդգրկվում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին: Շարունակվում է ուսուցիչների մասնակցությունը նոր չափորոշչային պահանջների ներդրման վերաբերյալ վերապատրաստումներին:<br>➢ Արդյունավետ համագործակցություն է ընթանում Գնահատման Թեստավորման Կենտրոնի հետ՝ հատկապես քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականցման շուրջ:<br>➢ Դպրոցն ակտիվ համագործակցել է «Մասնակցային դպրոց», «Դասավանդիր Հայաստան», «Այբ» կրթական կառույցների հետ:<br>➢ Դպրոցը համագործակցում է Վանաձորի պետական համալսարանի հետ: Մի շարք ֆակուլտետների ուսանողներ տարիներ շարունակ իրենց ուսումնական պրակտիկան անց են կացնում Վանաձորի թիվ 20 հիմնական դպրոցում:<br>➢ Հիմք է դրվել համայնքի մի քանի դպրոցների հետ կրթական համագործակցությունների, որոնք նախատեսվում է իրականացնել 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում:<br>➢ Դպրոցը համագործակցում է ՀՀ ԿԳՄՍՆ, ՀՀ Լոռու մարզպետարանի, ՀՀ Կրթության տեսչական մարմնի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, իրավապահ մարմինների, ՀՀ Ֆուտբոլի Ֆեդերացիայի, Վանաձորի | |

| | |
|---|---|
| պետական համալսարանի Հայաստանի Ագրարային համասլաւրնի մասնաճյուղի և կրթական ոլորտի այլ կառույցների հետ:<br><br>**5.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները:**<br><br>➢ Դպրոցում դասավանդում են մեծ մասամբ աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ: Մանկավարժները հիմնականում պատրաստակամ են կատարելագործել գիտելիքները, ուսուցման մեթոդները՝ ժամանակի պահանջներին բավարարող կրթության ապահովման նպատակով:<br>➢ Դպրոցում զգալի թիվ են կազմում վերապատրաստող ուսուցիչները:/6 ուսուցիչ/<br>➢ Դպրոցը և առանձին մանկավարժներ ընդգրկված են մի շարք կրթական ծրագրերում , համագործակցային աշխատանքներ են տանում տարբեր համայնքներում գործող ուսումնական հաստատությունների հետ:<br>➢ Դպրոցում կան ուսուցիչներ, ովքեր մասնակցություն է ունենում միջազգային ծրագրերի, սեմինարների, դասընթացների , ծանոթանում կրթության ոլորտի | **5. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները:**<br><br>➢ Հերթական ատեստավորման գործընթացը ժամանակին չանցած ուսուցիչների առկայությունը<br>➢ Ուսուցիչների միջին տարիքային ցուցանիշի բարձր լինելը, ինչը խոչընդոտում է հատկապես ՏՀՏ հմտությունների կիրառմանը:<br>➢ Շարունակական ոլորտային փոփոխությունների վերաբերյալ իրազեկվածության պակասը, կամ փոփոխված պահանջների կատարմանն ընդդիմանալը :<br><br>➢ Անհարժեշտություն կա խթանել համակարգված սեփական ռեսուրսներ ստեղծելն ու պահպանելը:<br>➢ Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն , իրավական փոփոխությունների մասին իրազեկվածության պակաս:<br>➢ Նախաձեռնողականության, ինքնուրույնության պակաս<br>➢ Հանրապետական , մարզային և միջազգային օլիմպիադաներում նշանակալի մասնակցությունուն ունենալու ցուցանիշների ցածր լինելը: |

| | |
|---|---|
| առաջավոր փորձին:<br>➢ Դպրոցում անգլերեմ առարկային դասերին համատեղ դասավնում է իրականացնում Խաղաղության կորպուսի կամավորը<br>➢ Ուսուցիչների մեշ մասը ըստ անհրաժեշտության, իրականացնում են հեռավար ուսուցում, մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams հեռավար հարթակն իր բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում է առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից:<br>➢ Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող մանկավարժներ /100%/, 33 ուսուցիչներից 8-ը ունեն տարակարգ, 2-ը ստանում են հավելավճար ՝ ըստ կամավոր ատեստավորման արդյունքների: 2023թ. Կամավոր ատեստավորման հայտ են լրացրել ևս երկեւ ուսուցիչ:<br>➢ Տնօրենության կողմից խրախուսվում է կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցությունը, ուսուցիչները պարբերաբար իրազեկվում են գործընթացի վերաբերյալ հայտարարություններին: նոր ուսումնական տարում կամավոր ատեստավորման համար գրանցված երկու ուսուցիչ կա դպրոցում:<br>➢ Կա համագործակցային միջավայր, որի ապացույցն են ինտեգրված դասերը, միջառարկայական կապերի վրա հիմնված համակցված դասերը, համատեղ | ➢ Կարիք կա իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատում և վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերի վերհանում:<br>➢ Անհրաժեշտ է մշակել խրախուսման հստակ չափանիշներ, որոնք կշահագրգռեն ուսուցչի ունենալ առարկայական օլիմպիադաներում հաղթող, կրթական ծրագրերում ակտիվ մասնակցություն ունեցող սաներ:<br>➢ Խրախուսում սահմանել նաև ինքնակրթության ու ինքնազարգացման հնարավորություններն արդյունավետ օգտագործող ուսուցիչների համար: |

| | |
|---|---|
| միջոցառումները, փոխադարձ դասալսումները:<br>➢ Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն: Դպրոցի տնօրենությունը պարբերաբար իրականացնում է խորհրդատվական և վերահսկողական աշխատանքեր նշված ուղղությամբ:<br>➢ Ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներդպրոցական վերահսկողության պլանների առկայություն, պարբերական մշտադիտարկումներ և արդյունքների վերլուծություններ: | |
| **6. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների ներկայացում**<br>➢ Շարունակական աշխատանք է ընթանում ավանդական մեթոդների արդյունավետություն բարձրաձնելու նպատակով՝ նոր մոտեցումների ներդրման, ՏՀՏ գործիքների իմացության կատերալագործման ուղղությամբ: Ուսուցիչներն իրազեկված են <u>«Հայկական կրթական միջավայր»</u>, **«Պաշարների շտեմարան»** կայքերի մասին:<br>➢ Տնօրենության առաջարկով դպրոցի ուսուցիչներն գրանցվել են «Աշխարհացույց» կրթական հարթակում՝ ինչը հնարավորություն կտա ընդլայնել ինտերակտիվ կրթության իրականացումը:<br>➢ Մեծ ուշադրություն է դարձվում ՀՀ ԿԳՄՍՆ | **6. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների ներկայացում**<br>➢ Հեռավար դասերի ստեղծման վարման, պաշարների հավաքագրման, ըստ առարկաների տեսակավորման բացակայություն: Սա կարող է նաև լուրջ աջակցող գործիք դառնալ մասնախմբերի աշխատանքները կազմակերպելիս և անփորձ ուսուցիչներին աջակցելու համար:<br>➢ Լաբորատորիայի բացակայության պայմաններումպատրաստի ցուցադրությունների, գործնական աշխատանքներիառցանց ռեսուրսները չօգտագործելը: /Օրինակ՝ **«Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»** կայքը /<br>➢ Նորարական ֆինանսական ներդրումներ պահանջող գաղափարների իրագործելիության և ֆինանսական |

| | |
|---|---|
| փորձառությամբ իրականացվող ծրագրերի մասին իրազեկվածության բարձրացման և ուսուցիչների ու աշակերտների մասնակցության հարցերին:<br>➢ Մեծ է Արմաթ ինժեներական լաբորատորայի դասընթացներին հաճախող սաների թիվը: | հնարավորությունների անհամատեղելիություն:<br>➢ Նախատեսվում է նոր 2-րդ,5-րդ և 7-րդ դասարանների դասասենյակներն ապահովել շարժական ինտերնետ կապով և համակարգիչներով ՝ ըստ հնարավորության:<br>➢ Կան ուսուցիչներ. որոնք դեռևս լավ չեն տիրապետում ՏՀՏ հմտություններին և միայն լրացուցիչ աջակցության դեպքում են դրանք կիրառում դասապրոցեսի ընթացքում |
| **7. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն** | **7. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն** |
| ➢ Հանրակրթական չափորոշիչների փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով , թե ուսուցիչները մեծամասնություն և թե տնօրենությունը ծանոթացել են նոր իրավակարգավորումներին, մասնակցել են վերապատրաստումների, նաև ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացված, քննարկել չափորոշչային նոր պահանջների առանձնահատկությունները:<br>➢ Առարկայական թեմատիկ պլանները կազմված են նոր չափորոշչային պահանջներին համապատասխան:<br>➢ Ուսուցիչների ընտությունը նոր չափորոշչային պահանջներով առաջնորդվող դասարաններում ճիշտ է | ➢ Նոր չափորոշիչների ներդրման ընթացքում չնախատեսված դժվարությունների ի հայտ գալը, նոր պահանջներին ուսուցիչների աշխատելաոճի անհամապատասխանությունը<br>➢ Դասագրքերի բացակայությունը, կամ միայն էլեկտրոնային տարբերակներով հասանելիությունը: Նյութական/ֆինանսական/ և մարդկային ռեսուրսների անբավարարությունը լիարժեք ապահովելու 2,5,7 րդ դասարաններում անհրաժեշտ ուսումնական նյութերով: |

| | |
|---|---|
| իրականացված, քանի որ վերջիններս պատրաստ են սովորել, կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները և լավագույնս ապահովել իրենց առջև դրված նպատակների ու խնդիրների իրագործումը:<br><br>**8. Աշխատակազմի արժևորման խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:**<br><br>➢ Ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցելու հնարավորություն և խրախուսում:<br>➢ Ինքնակրթության համար հասանելի ռեսուրսները՝ այդ թվում էլեկտրոնային:<br>➢ Ուսուցիչների հետազոտական աշխատանքների իրականացման, նորարարական նախաձեռնություններին աջակցություն:<br>➢ Մասնագիտական վերապատրաստումներին մասնակցելու հնարավորությունը:<br>➢ Ուսուցիչները զգում են տնօրինության աջակցությունն ու վստահությունը, բաց են քննարկումների և առաջարկների համար:<br>➢ Ուսումնական տարվա կամ կիսամյակների ավարտին ձեռքբերումների ամփոփում և դրանց հիման վրա դրամական և ոչ դրամական պարգևատրումների նախատեսում:<br>➢ Մարզային, քաղաքային իշխանությունների կողմից | **8. Աշխատակազմի արժևորման խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:**<br><br>➢ Կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկություն ունեցողների քիչ լինելը:<br>➢ Երկիերթ աշխատաժամանակը ինքնակրթությանը՝ որպես խոչընդոտող հանգամանք<br>➢ Ֆինանսական կամ խրախուսական նվերների տեսքով խրախուսումների սակավություն<br>➢ Ուսուցիչների մեծարմանն ու աշխատանքի գնահատանքին նվիրված միջոցառումների պակասը<br>➢ Սեփական նախաձեռնությամբ այլ հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետ մասնագիտական քննարկումների, առաջավոր և ստացված փորձի դիտարկումների պակասը:<br>➢ Հաջողություններն ու ձեռքբերումները բարձրաձայնելու, կարևորելու ավանդույթի բացակայությունը: |

| | |
|---|---|
| խրախուսվելու և պարգևատրվելու հնարավորություններ:<br><br>**9. Ուսումնական նպատակով ծախսերի վերլուծությունը ՝ դրանց արդյունավետության ցուցանիշների , շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:**<br><br>➢ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:<br>➢ Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.<br>աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,<br>կոմունալ վճարներ,<br>գրասենյակային և տնտեսական ապրանքներ,<br>գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,<br>կապիտալ ծախսեր,<br>հատուկ նպատակային ծախսեր,<br>այլ ծախսեր:<br><br>➢ 2023թ սեպտեմբերից կիրառվելիք ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը.կարող են նպաստել ուսումնական | **9. Ուսումնական նպատակով ծախսերի վերլուծությունը ՝ դրանց արդյունավետության ցուցանիշների , շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:**<br><br>➢ Վերջին տարիներին ֆինանսական միջոցները նվազել են՝ պայմանավորված աշակերտների թվի նվազումով՝<br><br>2019- 2020ուստարի -525 աշակերտ<br><br>2020-2021ուստարի -491 աշակերտ<br><br>2022-2023 ուստարի - 451 աշակերտ<br><br>2022-2023 ուստարի - 405 աշակերտ<br><br>Նվազման միտումը դեռ կպահպանվի ՝կապված սահմանային թույլատրելի տեղերի հետ: Դպրոցն ըստ տարրական հանրակրթական գործունեության լիցենզիայի ունի 161տեղ և ըստ հիմնական հանրակրթական գործունեության լիցենզիայի՝218 տեղ:<br><br>➢ Վերջին երկու տարիների ֆինանսական միջոցների բաշխվածությունն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում , որ ֆինանսական միջոցների 90 և ավելի տոկոսը հատկացվում է աշխատավարձերին և դրան հավասարեցված վճարներին և կոմունալ ծախսերին:<br>➢ ՀՀ ԼՄ 2023թ փետրվարի 23-ի թիվ 86-Ա որոշմամբ |

| | |
|---|---|
| հաստատության ֆինանսական վիճակի բարելավմանը և ուսումնական նպատակներով իրականացվող ներդրումների ավելացմանը:<br><br>➢ Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում:<br><br>➢ Թվով 32 ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը շաբաթական 16 ժամ է; Մեկ դրույք լրիվ ծանրաբեռնավծություն ունեցող ուսուցչի առավելագույն դրույքաչափը/կախված աշխատանքային ստաժից/ 131.164 ՀՀ դրամ է, որը սահմանված նվազագույնից բարձր է:<br><br>10. **Հաստատության ուսումնական միջավայրը: Բազմակրծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն:**<br>➢ Ուսումնական միջավայրը հնարավորինս անվտանգ է: | Վանաձորի թիվ 20հիմնական դպրոցին պետական բյուջեով նախատեսված գումարիների շրջանակներում կատարված վերաբաշխմամբ տրամադրվել է 2.480.000 ՀՀ դրամ:<br><br>➢ Անհրաժեշտ է վերանայել տարբերակված մոտեցումը և անկախ աշխատանքային ստաժից սահմանել մեկ միասնական դրույքաչափ: Ուսուցչի նվազագույն աշխատավարձի բարձրացմանը համաչափ կարելի է դիտարկել դրույքաչափի բարձրացման հնարավորությունը, քանի որ ուսուցիչների կատարած աշխատանքը մեծածավալ է: Միջին ծանրաբեռնվածության ցածր լինելը պայմանավորված է նաև ուսուվիչների տարիքային բաշխվածությամբ: Ավագ տարիքային խմբում գտնվող ուսուցիչները խուսափում են շատ ժամային ծանրաբեռնվածությամբ աշխատել:<br><br>10. **Հաստատության ուսումնական միջավայրը: Բազմակրծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն:**<br>➢ Ուսումնական հաստատությունում բացակայում են հարմարեցումները, միջանցքները նեղ են, բացակայում են |

<table>
<tr>
<td>Աշխատակիցներն արհեստավարժ են ու իրենց աշխատանքով նպաստում են  ուսումնական ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական ծառայությունննորի տրամադրումը:<br><br>➢ Առկա են ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներդպրոցական վերահսկողության, առարկայական մասնախմբերի դասղեկների պլաններ, որոնք  օգնում են հաջորդական քայլերով հասնել ցանկալի արդյունքի:<br><br>➢ Դպրոցի համար կարևոր որոշումները, ընթացիկ աշխատանքները ներկայացվում են խորհրդակցական մարմիններում, տեղադրվում են դպրոցի կայքում, սոցիալական հարթակներում ՝ դրանով ապահովելով շահագրգիռ խմբերի իրազեկվածությունն ու մասնակցությունը:<br><br>➢ Ուսումնական միջավայրի բարենպաստ լինելու մասին է խոսում նաև աշակերտական հոսքի մեծ պահանջարկը, որ ունի դպրոցը: Չնայած սահմանային տեղերի լրացվածությունը համայնքում դրական արձագանքներն ու դպրոցում սովորելու ցանկություն հայտնողների թիվը տարեցտարի ավելի է մեծանում:</td>
<td>թեքահարթակները:<br>➢ Հաստատության բազմակարծիք ու մասնակցային կառավարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներդնել  ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության գնահատում տարբեր շահագրգիռ խմբերում, խորհրդացական մարմիններում: Մինչ այս նման գնահատումը բացակայել է:<br>➢ Անվտանգության տեսանկյունից առաջնահերթ է մարզադահլիճի կառուցումը կամ «մարզադաշտի» / հարմարեցված է , չափերով ստանդարտներից փոքր, չկահավորված/  ցանկապատումը ՝ հարակից ավտոտնակների ցածր և սրածայր տանիքներից մեկուսացումը, տվյալ տարածքի վրայով անցնող էլեկտրական հաստ մալուխների ուղղության փոխումը և այլն:<br><br>➢ Ծնողների մի մասի մասնակցության  պասիվությունը կամ</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| ➢ Դասարանական ծնողկան խորհուրդների, դպրոցի ծնողական խորհրդի, կառավարման խորհրդի անդամաների, աշակերտական խորհրդի անդամաների ընտությունններն իրականացվում են արդար, ուղղակի և հավասար սկզբունքներով: Աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունը ժողովրդավարական ընտրությունների մոդելով է կազմակերպվում և իրականացվում ՝ սովորողների անմիջական մասնակցությամբ և ջանքերով ՝ նախապատրաստումից մինչև արդյունքների հրապարակում:<br>➢ Սեպտեմբերմեկյան առաջին դասերին բոլոր դասարաններում փակցվել և ներկայացվել են սովորողների իրավունքները և պարտականությունները, ներքին կարգապահական կանոնները որոնք քննարկվել ու մշակվել են բոլոր խորհրդակցական մարմինների մասնակցությամբ:<br>➢ Դպրոցի տնօրենությունն ու աշխատակիցները մշտապես ուշադրության կենտրոնում են պահում աշակերտների ֆիզիկական, հոգեկան անվտանգությանն ուղղված աշխատանքները: Դասղեկների աշխատանքային պլաններում ներառվում են վատ սովորությունների, խտրականության դրսևորումների, ատելության խոսքի ու բուլինգի կանխարգելման ուղղված թեմաներ: Ամենաթույլ կասկածների դեպքում անգամ հետևողական աշխատանքներ են իրականացվում բացառելու նման | պակաս կարևորելը նշված գործընթացները:<br>➢ Աշակերտների գնալով ավելի հաճախ հանդիպող կախվածությունը համակարգչային խաղերից, սոցկայքերից, ինչն էլ հաճախ հանգեցնում է թե հոգեհուզական լարված ու ագրեսիվ դրսևորումների, թե վնասում է աշակերտների ֆիզիկական առողջությանն ու սոցիալականացմանը:<br>➢ Վատ օրինակը վարակիչ է, ցավոք: Որքան էլ դպրոցը քարոզի առողջ ապրելակերպ, շատ երեխաներ տանը , բակում ականատես են լինում մեծահասաների հակասոցիալական վարքին, վատ սովորություններին ու կարծրատիպային մտածողությանը:<br>➢ Խնդիրներ են առաջանում ԿԱՊԿՈՒ աշակերտների գնահատման հետ կապված, քանի որ հաճախ ծնողները հրաժարվում են ընդունել գնահատման կարևորությունը, արգելում և խոչընդոտում են հոգեբանի աշխատանքին: Այստեղ խնդիր կա լրացուցիչ ջանքերի ներդրման դպրոցի կողմից: |

| | |
|---|---|
| երևույթները: Դպրոցի հոգեբանի կողմից ուսուցանող սեմինարներ են անցկացվում նաև ծնողական համայնքի համար:<br>➢ Սոցիալապես անապահով կամ սոցիալական բարդ իրավիճակում գտնվող աշակերտների հետ աշխատանքներն իրականացվում են շատ զգույշ, համակարգված և համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ:<br>➢ Դպրոցում արդյունավետ է կազմակերպվում նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների ներառումը համընդհանուր կրթական գործընթացին ` ի շնորհիվ հոգեբան , ուսուցչի օգնականների և ՏՄԱԿ-ի աշխատակիցների հետևողական աշխատանքի: Այժմ դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտների խնդիրնրը հիմնականում խոսքային և ինտելեկտուալ են և նրանց հետ աշխատանքները տալիս են դրական ցուցանիշներ:<br><br>➢ **Հաստատության կրթության որակի նկարագիր**<br>➢ Թե տարրական և թե հիմնական կրթական աստիճաններում գերազանցությամբ սովրաղ աշակերտների թիվը և տոկոսը աճել է նախորդ ուսումանակն տարվա համեմատությամբ: Համապատասխանաբար նվազել է ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը: | ➢ **Հաստատության կրթության որակի նկարագիր**<br>➢ Հաստատությունում մաթեմատիկա առարկայի դրվածքի և որակի բարելավման առաջնահերթ խնդիր կա:<br>➢ 2022-2023 ուստարում նվազել է առարկայակն օլիմպիադաներում սովորողների մասնակցության և մրցանակային տեղեր զբաղեցնելու ցուցանիշները:<br>➢ Ի տարբերություն հայոց լեզու առարակայի արդյունքների տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները |

- 2022-2023 ուստարվա ավարտին  երկտարեցի աշակերտներ չկան:
- ՀՀ կրթության տեսչական մարմնի արտաքին գնահատման արդյունքները հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից ունեն հետևյալ պատկերը.




- Հայոց լեզու առարկայից 6-րդ դասարանի սովորողների գերակշիռ մասը գրանցել է գերազանց արդյունք, 9-րդ դասարանի սովորողների 70 տոկոսն է գրանցել գերազանց արդյունք:
- 2022թ մայիսի ԿԶՆԱԿ-ի տարվերջյան մշտադիտարկման արդյունքները եղել են նշված ցուցանիշներից շատ ավելի բարձր: Սակայն դա մեծապես պայմանավորված է եղել առաջադրանքների հեշտությամբ:
- 2023թ սեպտեմբերից հաստատությունում հիմնական ցույց են տվել, որ աշակերտների գերակշիռ մասը ստացել է բավարար գնահատական, ինչն անշուշտ  պարտավորություն է ստեղծում վերանայելու մաթեմատիկա առարկայի դասավանդումը, գտնելու առարկայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնող միջոցներ:
- Չնայած  դասավանդման որակի հուսադրող լինելուն, առարկայական օլիմպիադաների, մրցույթների հաղթողների թիվը կամ շատ քիչ է, կամ չկա:
- Անհրաժեշտ է բարելավել ուսումնական միջավայրը, դասավանդման ընթացքում կիրառել ուսումնաօժանդակ նյութեր, ՏՀՏ գործիքներ:
- Ուսուցիչների մոտ ձևավորել դասերի պլանավորման հստակ հմտություններ ՝ մասնավորապես նպատակների և վերջնարդյունքների հստակ սահմանման կարողություն:
- Բնագիտական առարկաների դասավանդման արդյունավետության համար լաբորատոր փորձերի իրականացման հնարավորություն է պետք ստեղծել:

| | |
|---|---|
| կրթական աստիճանում գործող մաթեմատիկայի խմբակը նպատակ ունի նպաստել առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրության աճին:<br>➢ Հիմնական դպրոց ն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ են ընդունվել 51 աշակերտից 7-ը, մնացածը նախընտրել են ուսումը շարունակել ավագ դպրոցներում:<br>➢ Իրականացվում է ներդպրոցական վերահսկողություն, պլանավորված գործողությունների միջոցով կրթության որակի վերահսկամն, արդյունքների վերլուծության և ցուցանիշների բարելավման նպատակով: | |

Առկա հիմնախնդիրները

**Ընդհանրացնելով վերոշարադրյալը կարելի է առանձնացնել մի շարք հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ լուծում են պահանջում.**

- Շենքի հիմնանորոգում և տիպային դպրոցի կառուցում,

**Այս կետի անիրագործելիության դեպքում անհրաժեշտ է.**

- Մարզադահլիճի, մարզադաշտի կառուցում, սպորտային անհրաժեշտ գույքով ապահովում
- Առարկայական դասասենյակների ստեղծում, դասարանների թվի ավելացում՝ հնարավոր է իրագործել բաց պատշգամբների հաշվին շինարարական փոփոխություններ անելու միջոցով: Սա կարևոր է նաև միջանցքների լայնության ավելացման, թեքահարթակների կառուցման և ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված միջավայրի ստեղծման համար:
- Առաջանահերթ է ռազմագիտության կաբինետի ՝ ըստ նշանակությյան օգտագործումը
  Այժմ կաբինետն օգտագործվում է որպես դասասենյակ:
- Ուսումնական նյութերի մեծ պակաս կա: Առկա նյութերը, քարտեզները, պաստառները, համակարգչային տեխնիկան հին են, շատ դեպքում պիտանի չեն օգտագծման:
- Գրադարանը միայն  ըստ նշանակության օգտագործելու հիմնախնդիր կա, քանի որ երբեմն կիսվող դասարանների դասերի համար որպես դասասենյակ է օգտագործվում
- Լաբորատորիաների՝ կենսաբանության , քիմիայի և ֆիզիկայի ստեղծում ՝ անհրաժեշտ գույքով ու պարագաներով հագեցած

Առկա հիմնախնդիրներ, որոնք կապված չեն շենքային պայմանների հետ.

- Անհրաժեշտ է նորացնել գրադարանի ֆոնդը, ձեք բերել ժամանակակից և դասական գրականություն
- Նոր և ժամանակակից պահանջներին համապատասխանող համակարգիչներ, ձայնարկիչներ, էլեկտրոնային գրատախտակ և այլն
- Համագործակցությունների ընդլայնում՝ ներդպրոցական և արտադպրոցական: Հատկապես կարևոր են խորհրդակացական մարմինների միջև համագործակցությունների ընդլայնումը և համայնքի հետ շփումների ակտիվացումը:
- Աշակերտների մոտիվացիայի խթանում, հաճելի կրթական համագործակցային  միջավայրի ստեղծում:
- Արտադասարանային խմբակների սակավություն՝ ըստ նախասիրությունների :
- Ուսուցիչների խրախուսման, արժևորման գործուն քայլերի պակաս:

Ինչ կտա դպրոցի նշված հիմնախնդիրների լուծումը.

- Շենքային հարմարավետ միջավայրի ստեղծումը կարող է խթան հանդիսանալ սովորելու նկատմամբ հետաքրքրության , ուսումնական արդյունքների բարելավման համար: ամենակարչորն այն մոտիվացիան գտնելն է , որը ժամանակակից երեխային հնարավորություն կտա իր կարիքին համապատասխան կրթություն ստանալ:
- Ապահովելով ուսուցչի անհրաժեշտ պայմաններով ու ուսումնական նյութերով, դպրոցի տնօրենությունն ավելի իրատեսական պահանջներ կարող է դնել կրթության որակի բարձրացման համար, ավելի արդյունավետ կգործեն ներդպրոցական վերահսկողության մեխանիզմները:
- Ուսուցիչների մոտ նորի նկատմաբ հետաքրրքրություն կառաջանա, կկիրառվեն նորարարական մոտեցումներ:
- Կձևավորովի իրական մասնակցային կառավարման համար նպաստավոր միջավայր:

## 11. Նպատակներ և խնդիրներ

**Նպատակ 1 - Կրթական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում**

| Խնդիրներ | Պատասխանատուներ | Ժամկետներ | Նյութատեխնիկական միջոցներ |
|---|---|---|---|
| 1. Աշակերտների սովորելու մոտիվացիայի խթանում /տես նաև՝ նպատակ 3/ | Տնօրենություն, ԿԶՆԱԿ, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ , ծնողական խորհուրդ, խմբակավարներ | 2023-2028 | -Դիդակտիկ պարագաներ, մեթոդական գրականություն, առարկայակն պաստառներ, տրամաբանական խաղեր, էլեկտրոնային ռեսուրսներ |
| 2. Նյութատեխնիկական բազայի հարստացում, պայմանների բարելավում | ԿԳՄՍՆ, ԼՄ, Վարչատնտեսական մասի համակրգող, տնօրեն | 2023-2025 | Ֆինանսկան միջոցներ/ Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, մարզագույք, վանկապատ, արհեստական գազոն, մանկական մարզասարքեր՝ տարրական դասարաններում սովորող աշակերտների համար |
| Ուսումնական նյութեր, | ԿԳՄՍՆ, ԼՄ, Վարչատնտեսական | 2023-2026 | Պետական բյուջե, համագործակցություն այլ |

| | | | |
|---|---|---|---|
| պաստառներ, գրքեր, լաբորատոր գույք | մասի համակրգող , տնօրեն | | ուսումնական հաստատությունների հետ, աշակերտների, ուսուցիչների , ծնողների համատեղ կամավորական աշխատանք՝ պաստառների վերականգնման պատրաստման նպատակով :<br>Չափիչ սարքեր՝ չափագլաններ, չափանոթներ, շարժական և անշարժ ճախարակներ, օդահան պոմպ, շարժական անվտանգ լաբորատորիա՝ հարմար կիրառելու ոչ լաբորատոր պայմաններում, էլեկտրոնային ռեսուրսներ՝ տեսանյութեր:<br><br>Մագնիսական կամ մարկերային ոտնակներով գրատախտակ ՝ շարժական, աշակերտական գույք,տարածքը քամուց ու անձրևից պաշտպանելուռնպատակովշինարարական նյութեր |
| Գրքեր, ուղեցույցներ, ուսումնամեթոդական նյութեր | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող , գրադարանավար | 2023-2028 | Պետական բյուջե, համայնքի բնակիչների /նվիրատուների միջոցներ/:<br>Գեղարվեստական և մեթոդական գրականություն, մանկական տրամաբանական խաղեր, լոտոներ |
| ՏՀՏ միջոցներ | Տնօրեն, վարչական համակարգող | 2023-2028 | Պետական բյուջե, հովանավորներ, դրամաշնորհային ծրագրեր<br>Էլեկտրոնային գրատախտակ, նոր համակարգիչներ, շարժական ինտերնետ կապ |
| 3. Մանկավարժական աշխատողների արհեստավարժության | Տնօրեն, ուսուցիչներ, բազմամասնագիտական թիմ | 2023-2028 | Պետական բյուջե, Կրթության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններ, |

| | | | |
|---|---|---|---|
| բարձրացում, կրթական ծառայությունների զրագետ իրականացում | ԿԶՆԱԿ , Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ<br><br>Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, տնտեսվար | 2023-2028<br><br>2023-2024 | Պետական միջոցներ, հովանավորներ : Ուսուցչանոցի համար տարածք, սեղաններ, բազմոց, պահարաններ, ինտերնետ կապին միացված համակարգիչ/ներ/, տպիչ սարք |
| 4. Անվտանգ միջավայրի ապահովում | Տնօրենություն | 2023-2024 | Համայնքապետարան |
| 5. Անվտանգ ՝ առանց բռնության, առանց ատելության խոսքի ու առանց բուլինգի կրթկան միջավայրի ստեղծում | Տնօրենություն, խորհրդակցական մարմիններ, մանկավարժներ , ՏՄԱԿ, ՀՀ Ոստիկանություն, ՀԿ-ներ | | |
| 6. Ուսումնական հաստատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ | Տնօրենություն, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող , բազմամասնագիտական թիմ, դասղեկներ | 2023-2028 | |

| | | | |
|---|---|---|---|
| հոգեբանական ճնշման բացառման, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորում՝ թե ընտանիքում, թե դպրոցում հարցերի | | | |
| **7.** Ուսումնական հաստատության արդյունավետ գործունեության համար համայնքի կարիքների ու ներուժի օգտագործում | Տնօրենություն համայնք | | Նոր ծրագրեր, առաջարկներ |
| 8, Երկարօրյա դասընթացների կազմակերպում | Տնօրենություն, մանկավարժներ, ծնողներ | | |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ գործողություններ |
|---|---|
| ➢ Հետաքրքրությունների պակաս որոշ առարկաների նկատմամբ | ➢ Խրախուսել ուսուցիչների կողմից ստեղծագործ ու նորարական մոտեցումների կիրառումը<br>➢ Անահատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտին<br>➢ Ապահովել անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով, էլեկտրոնային ռեսուրսներով<br>➢ Քննարկումների , հանդիպումների արդյունքում մշակել միասնական պահանջներ ու լավագույն արդյունքին հասնելու հնարավոր միջոցներ |
| ➢ Տարածքի չափերի անհամապատասխանություն պահանջվող ստանդարտներին, անհարաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրման համար պահանջվող ֆինանսական մեծածավալ ներդրումների | ➢ Շենքային պայմանների բարելավման նպատակով՝ խնդիրը քննարկել լիազոր մարմնի հետ: Պետական միջոցների բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԳՄՍՆ համաձայնությամբ դիմել տարբեր հիմնադրամների, հովանավորների:<br>➢ Յուրաքանչյուր տարի ֆինանսական պլանավորում իրականացնելիս ներկայացնել գնահատել կրթական կարիքների պահանջարկը՝ ըստ հնարավորության: |

| | |
|---|---|
| անհրաժեշտությունը | |
| ➢ Էլեկտրոնային համակարգված շտեմարանի ստեղծման և հասանելիության ապահովման համար անհրաժեշտ մասնագիտական որակների բացակայությունը | ➢ Սեմինարներին, դասընթացներին, վերապատրաստումներին ըստ կարիքների մասնակցություն: ներդպրոցական ուսուցանող , համագործակցային միջավայրի ստեղծում: |
| ➢ Ֆորս մաժորային իրավիճակներ | ➢ Արագ կողմնորոշվելու, հնարավորինս համակարգված տարբեր իրավիճակներում գործելու կարողությունների զարգացում /օր՝ արտակարգ իրավիճակներում գործելու պլան, ուսումնական տագնապ նա այլն/ |
| ➢ Երկհերթ աշխատանքային ռեժիմի պատճառով առաջացած անհարմարություններ/ օրինակ՝ նախասիրական խմբակներին հաճախելու դժվարություններ են առաջանում/ | ➢ Համագործակցել ծնողների հետ ՝ գտնել լավագույն լուծում կոնրետ իրավիճակի համար: |
| ➢ Բնապահպանական նկատառումներից ելնելով ծառահատման արգելք | Դիմել համայնքապետարան և ստանալ համապատասխան աջակցություն և թույլտվություն: |
| ➢ Ընտանեկան բռնությունների քողարկված լինելը | Համագործակցել լիազոր մարմնի, ոստիկանության , սոցիալական աջակցության ծառայությունների և այլ պատասխանատուների հետ: |
| ➢ Համայնքի կարիքների և կրթական գործընթացի անհամատեղելիություն | Համայնքի կարիքների վերլուծությունն անել բազմակողմանի և համապատասխանեցնել կրթական գործընթացներին: |
| ➢ Աշակերտների կամ ծնողների կանխակալ վերաբերմունքը երկարօրյա դասընթացների կազմակերպմանը, ժամային ծանրաբեռնվածությունից խուսափելը: | Իրականացնել բացատրկան աշխատանքներ, հետևել երկարօրյայի կազմակերպման արդյունավետությանը, լավ օրինակներով ոգևորել: |

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ, | Արդյունքների գնահատման չափանիշներ | Անբավարար /պլանավորված գործողություննե րը չեն իրականացվել / | Բավարար / իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ/ | Լավ /իրականացվել են ամբողջությամ բ, սակայն ակնկալվող արդյունքը մասամբ են ապահովել/ | Գերազանց /ամբողջությ ամբ իրականացվ ել են ամբողջությա մբ և ապահոցել են ակնկալվող արդյունքն ամբողջությա մբ |
|---|---|---|---|---|---|
| Դպրոցամերձ տարածքի հարմարեցում՝ ֆիզկուլտուրայի բացօթյա դասերին, հողածածկ տարածքի բարեկարգում, կահավորում, տարածքի ցանկապատում<br>1.<br>ա/ Քարտեզների, առարկայական պաստառների ձեռքբերում, լաբորատոր գույքի հարստացում<br><br>բ/ Համագործակցություն համայնքի | ➢ Բարեկարգ դպրոցամերձ տարածք:<br><br>➢ Ձեռք բերված ուսումնական պարագաներ<br><br>➢ Հաշվետվություններ իրակացված համագործակցություններ ի մասին՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի: | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| լաբորատորիաներ ունեցող ուսումնական հաստատությունների հետ<br><br>գ/Ուսումնական փորձերի վերաբերյալ տեսանյութերի ձեռքբերում, դիտողականության ապահովում<br><br>դ/ Բացօթյա դասերի անցկացման համար նպաստավոր պայմանների ստեղծում:<br><br>ե/ Գրադարանային ֆոնդի համալրում , արդիականացում, էլեկտրոնային հասանելի շտեմարանի ստեղծում<br><br>զ/Դպրոցի կայքում հասանելի գրականության ցանկի հրապարակում<br><br>դ/ Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, արդիականացում | ➢ Բացօթյա դասասենյակի կահավորում, հարմարեցում:<br><br>➢ Գրքային ֆոնդի համալրման մասին ակտեր:<br><br>➢ Կայքում տեղադրված տեղեկատվություն:<br><br>➢ Ձեռք բերված համակարգիչներ, ձեռքբերման ակտեր | | | | |
| ա/ Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը, տարակարգերի ձեռքբերմանը, մասնագիտական | ➢ Խրախուսման մեխանիզմների քննարկումներ, հրամաններ: Կամավոր | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| դասընթացներին<br><br>բ/ Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, սկսնակ կադրերի հետ պարբերաբար տարվող աշխատանք<br><br>գ/ Աշխատանքային անվտանգ և հարմարավետ պայմանների ապահովում, | ատեստավորման մասնակիցների թիվ<br>➢ Տարակարգերի վկայագրեր, դասընթացների մասնակցության վկայագրեր:<br>➢<br>➢ Կահավորված ուսուցչանոցի առկայություն:<br>➢ | | | | |
| 1. Կանխարգելել հնարավոր վտանգները, համագործակցել պատկան մարմինների հետ:<br>2. Մշակել և իրականացնել ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ | ➢ Գրություններ, համագործակցության փաստեր<br><br>➢ Սեմինարներ, խորհրդատվություններ, զրույցներ | | | | |
| Երկարօրյա դասերի կազմակերպում | ➢ Հրամաններ, աշակերտների ցուցաբերած արդյունքների վերլուծություն | | | | |

Նպատակ 2

**Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված՝ հիմնական դպրոցի շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջների, կարողունակություններն ու վերջնարդյունքների ապահովում**

| Խնդիրներ | Պատասխանատուներ | Ժամկետներ | Նյութատեխնիկական միջոցներ |
|---|---|---|---|
| Սովորողների մոտիվացիայի խթանում | ԿԳՄՍՆ, վարչատնտեսական մասի համակարգող , տնօրեն, տնօրենի տեղակալներ, մանկավարժներ, ՏՄԱԿ/Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն/ | 2023-2028 | Բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, արտաբյուջե |
| Աշակերտական ինքնավարության խթանում | Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ԴԱԿ, մանկավարժական համակազմ | 2023-2028 | Ապահով և անվանդանգ տրանսպորտ/տրանսպորտային ծառայություն, ՏՀՏ գործիքներ, համագործակցային միջավայր /օրինակ՝ շրջանաձև դասավորվածություն ունեցող սրահ, դասասենյակ/ |
| Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցություններ համայնքի այլ ուսումնական հաստատությունների ՝ մասնավորապես ավագ դպրոցների և բուհերի հետ: | Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, բազմամասնագիտական թիմ, ծնողխորհուրդ | 2023-2028 | ՏՀՏ գործիքներ, մարկերներ, գունաներկեր, ինքնակպչուն թղթեր, մագնիսական գրատախտակներ և այլ գրենական պարագաներ ՝ քննարկումների նյութն առավել տեսանելի դարձնելու նպատակով: |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ գործողություններ |
|---|---|
| ➢ Երեխաների հետաքրքրությունների բացահայտման դժվարություններ, մանկավարժական համակազմի պասիվություն, նյութատեխնիկական միջոցների բացկայություն, շենքային պայմանների անհամապատասխանություն<br>1. | 2. Հոգեբանի, դաստեկների, կրթական և դաստիարակչական գործունեություն իրականացնող աշխատակիցների տարեկան աշխատանքային պլաններով նախատեսել և իրականացնել հետևողական աշխատանք ՝ աշակերտների նախասիրությունների բացահայտման ուղղությամբ:<br>3. Հնարավորինս ապահովել նյութատեխնիկական անհրաժեշտ պարագաներով, զբաղվել պայմանների բարելավմամբ: |
| ➢ Համագործակցող կողմերի հետաքրքրվածության և նախաձեռնողականության պակաս:<br>4. | 5. Խրախուսել նախաձեռնությունները, պարբերական սեմինարներով, քննարկումներով  վերհանել խնդիրները և տալ իրավիճակային լուծումներ: |
| ➢ Աշակերտների՝ իրենց տարիքին անհամապատախան ծանրաբեռնվածություն /տնային առաջադրանքների մեծ ծավալ, լրացուցիչ պարապմունքներ, նախասիրական խմբակներ և այլն/<br>6. | 7. Խստագույնս հետևել աշակերտների ծանրաբեռնվածության նորմատիվային պահանջներին, զրուցել ծնողների հետ, վերհանել առկա խնդիրները, զբաղվել դրանց լուծմամբ: |

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ, | Արդյունքների գնահատման չափանիշներ | Անբավարար /պլանավորված գործողություննե րը չեն իրականացվել / | Բավարար / իրականացվել են թերի կամ  ոչ արդյունավետ/ | Լավ /իրականացվել են ամբողջությամ բ, սակայն ակնկալվող արդյունքը մասամբ են ապահովել/ | Գերազանց /ամբողջությ ամբ իրականացվ ել են ամբողջությա մբ և ապահոցել են ակնկալվող |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | արդյունքն ամբողջությամբ |
| 1.<br>➢ Կրթական հարմարավետ ու բարեկարգ միջավայրի ստեղծում /նպատակ 1/<br>➢ Հետաքրքիր ու նորարական ուսումնական մեթոդների կիրառում /նպատակ3/<br>➢ Երեխայի կրթական պահանջներից բխող կառավարման, դասի պլանավորման, կրթական հարմարավետ միջավայրի ապահովման աշխատանքներ | ➢ Իրականացված աշխատանքների հաշվետվություններ՝ տարեկան առնվազն երկու անգամ:<br>➢ Դասալսումների արձանագրություններ, մշտադիտարկման արդյունքներ<br>➢ Երեխաների կրթական պահանջների ուսումնասիրման փաստաթղթեր, օտարման, բռնության, խտրական վերաբերմունքի կանխարգելման նպատակով իրականացված սեմինարներ, հանդիպումներ, անհատական և իրավիճակային աշխատանքների նկարագրություններ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.<br>➢ Ճանաչողական դասեր, աշակերտական հաջողված նախաձեռնությունների պատմությունների ներկայացում, աշխորհրդի ձևավորման թափանցիկ գործընթացի կազմակերպում , աշակերտների ներգրավում կարգապահական կանոնների մշակման , կրթական կարիքների գնահատման , մատուցվող ուսումնական ծառայությունների որակի գնահատման և բարելավման աշխատանքներին | ➢ Աշակերտական խորհրդի նիստերի արձանագրություններ, կատարված աշխատանքների հաշվետվություններ, կայքում հրապարակված տեղեկատվություններ: | | | | |
| 3.<br>➢ Սովորողների նախասիրությունների բացահայտում ՝զրույցներ, թեստեր, տեսաֆիլմերի դիտում<br>➢ Իրականացնել տեղեկատվական հանդիպումներ՝ մասնագիտական կրթություն առաջարկող | ➢ Հաշվետվություններ, դպրոցի կայքում հրապարակված նյութեր:<br>➢ Իրականացված հանդիպումների, համագործակցությունն երի նկարագրություններ, նկարներ: | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ:<br>➢ Լաբորատորիաների և լաբորատոր սարքերի պակասը լրացնելու նպատակով  փորձնական դասեր ,այցեր իրականացնել լաբորատորիաներ ունեցող ուսումնական հաստատություններ:<br>➢ Ծնողական համայնքի ներուժն ուսումնասիրել և առաջարկել հանդիպումներ իրականացնել աշակերտների հետ՝ իրենց մասնագիտությունների առանձնահատկությունների մասին:<br>➢ Ճանաչողական այցեր և հանդիպումներ | | | | | |

**Նպատակ 3**

**Մասնակցային կառավարման ապահովում և դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում**

| Խնդիրներ | Պատասխանատուներ | Ժամկետներ | Նյութատեխնիկական միջոցներ |
|---|---|---|---|
| Խրախուսել սովորողների մասնակցությունն ու նախաձեռնողականությունը<br><br>Ընդլայնել համագործակցությունը , լիազոր մարմնի, համայնքի, հետ ՝ կրթությունից դուրս մնացած և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության սահմանադրական իրավունքի իրացման շուրջ<br><br>Ապահովել թափանցիկ և բաց կառավարում ՝ խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավմաբ և տեղեկատվական հարթակների՝ մասնավորապես դպրոցական կայքի միջոցով: | Տնօրեն. Տնօրենի տեղակալներ , վարչատնտեսական մասի համակարգող, խորհրդակցական մարմիններ | 2023-2028թթ | Դեմ առ դեմ քննարկումների իրականացման նպատակով կլոր սեղանի սկզբունքով կահավորված սրահ կամ դասարան |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ գործողություններ |
|---|---|
| ➢ Ներգրավված անձանց պասիվությունը կամ անտարբերությունը: | Խորհրդակցական մարմիններում ներգրավված անձանց ներկայացնել իրենց իրավունքները և պարտականությունները, անդրադառնալ նրանց կողմից ընդունված որոշումների կարևորությանը: |
| | Կազմակերպել խորհրդակցական մարմինների հանդիպումները կրթության ոլորտի պատասխանատուների, կազմակերպությունների, հետաքրքիր ու կազմակերպված հանդիպումների արդյունքում ձևավորել հետաքրքրություն , խրախուսել մասնակցություն |

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ, | Արդյունքների գնահատման չափանիշներ | Անբավարար /պլանավորված գործողությունները չեն իրականացվել / | Բավարար / իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ/ | Լավ /իրականացվել են ամբողջությամբ, սակայն ակնկալվող արդյունքը մասամբ են ապահովել/ | Գերազանց /ամբողջությամբ իրականացվել են ամբողջությամբ և ապահոցել են ակնկալվող արդյունքն ամբողջությամբ |
|---|---|---|---|---|---|
| ➢ Առաջարկների բազմազանություն, սովորողների կարիքների արդյունավետ վերհանում<br>➢ Հավասար պայմանների ապահովում<br>➢ Կառավարման խորհրդի, | ➢ Արձանագրություններ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների ակտիվ ներգրավվածություն կառավարամանը<br>➢ Շահառուների հետ համաձայնեցված որոշումների կայացում | | | | | |

**Նպատակ 4**

**Ազգային դպրոցի անվանման համապատասխանեցում ազգային կրթական, դաստիարակչական խնդիրներին**

| Խնդիրներ | Պատասխանատուներ | Ժամկետներ | Նյութատեխնիկական միջոցներ |
|---|---|---|---|
| ➢ Դպրոցի անվանափոխություն<br><br>➢ Առաջին կետով համաձայնության չհասնելու կամ լիազորված մարմնի թույլտվության բացակայության դեպքում՝ իմանալ ինչու է դպրոցն անվանակոչվել Պավլո /ըստ կանոնադրության՝ Պաբլո/ Տիչինայի անունով<br><br>➢ Պետական և ազգային տոների | Լիազորված մարմին, տնօրեն, խորհրդակցական մարմիններ, մասնկավարժներ | 2023-2025 | Պաստառներ, իրազեկման թերթիկներ<br><br>Տեղեկատվական վահանակ՝ տեսանելի վայրում:<br><br>Միջոցառումների կազմակերպման համար |

| | | | |
|---|---|---|---|
| արժևորում, դրանց խորհուրդի ու կարևորության մասին հստակ պատկերացումների ձևավորում | | | նյութեր, պարազաներ |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ գործողություններ |
|---|---|
| ➢ Ժամանկավրեպ լինելը, շահառուների կողմից խնդրի չկարևորելը | Հայրենասիրական ոգով դաստիարակության մի մասն է հրազատ դպրոցի անունը հպարտությամբ արտասանելու ուսուցչի ու աշակերտի կարողությունը : Այս մասին պետք է բարձրաձայնել, քննարկել և գտնել լավագույն լուծումը: |
| ➢ Աշակերտների՝ միջոցառումներին ներգրավվածության պակաս | Պարբերաբար իրականացնել դիտարկումներ, շնորհաշատ աշակերտների բացահայտում, օժտված և ԿԱՊԿ ունեցող աշակերտների ներգրավվածությունն ապահովելու եղանակներ մշակել: |

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ, | Արդյունքների գնահատման չափանիշներ | Անբավարար /պլանավորված գործողությունները չեն իրականացվել/ | Բավարար / իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ/ | Լավ /իրականացվել են ամբողջությամբ, սակայն ակնկալվող արդյունքը մասամբ են ապահովվել/ | Գերազանց /ամբողջությամբ իրականացվել են ամբողջությամբ և ապահոցել են ակնկալվող արդյունքն ամբողջությամբ |
|---|---|---|---|---|---|
| ➢ Մասնակցային եղանակով քննարկումներ, առաջարկների ներկայացում, լավագույն տարբերակի ընտրություն<br>➢ Ներկայացնել Պ. Տիչինայի հայ գրականության լուսաբանման գործում ունեցած դերը, արժևորել նրա գործունեություն այս ոլորտում /Ներկա իրավիճակում դպրոցի շահառուների մեծ մասին անհասկանալի է, թե ինչու է դպրոցը կրում Տիչինայի անունը/<br>➢ Միջոցառումների, բաց դասերի, նախագծային աշխատանքների իրականացում ` հիշարժան իրադարձությունների, տոների, հիշատակի օրերի հետ կապված | ➢ Համատեղ քննարկումների արդյունքում ընդունված որոշումներ, արձանագրություններ, ձայնագրություններ<br>➢ Անվանափոխություն կամ պատմական անկյան ստեղծում:<br>➢ Իրականացված միջոցառումներ | | | | |

**Նպատակ 5**

**Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում՝ մասնավորապես հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների կատարելագործում և արհեստավարժ կիրառում**

| Խնդիրներ | Պատասխանատուներ | Ժամկետներ | Նյութատեխնիկական միջոցներ |
|---|---|---|---|
| Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, դասավանդման մեթոդների արդիականացում<br><br>Արդի աշխարհի փոփոխություններին ու իրողություններին իրազեկվածության բարձրացում<br><br>Աշակերտների նախասիրությունների ուսումնասիրում և խմբակների ձևավորում<br><br>Աշակերտների ուսումնառության արդյունքների ուսումնասիրում է ըստ անհրաժեշտության երկարօրյա դասընթացների կազմակերպում:<br><br>Ուսուցիչների մասնագիտական կարիքների վերլուծություն և դրանց | ԿԳՄՍՆ, ԿԶՆԱԿ Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ՄԿԱԳՀ, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, խմբակավար, մեթոդմիավորման նախագահներ, կրթական ազգային և միջազգային կազմակերպություններ | 2023-2028 | Պետական բյուջե, արագ ինտերնետ կապ դպրոցի տարածքում, համակարգիչներով, էլ. գրատախտակով հագեցվածություն, մասնագիտական գրականություն, սեմինարներ |

| | | | |
|---|---|---|---|
| արդյունքների հիման վրա ըստ կարիքի վերապատրաստումների մանակցություն:<br><br>Հաստատությունում պարբերաբար իրականացվում են դասալսումներ տնօրենի և փոխտնօրենի կողմից, դրանց արդյունքները քննարկվում են առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ: | | | |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ գործողություններ |
|---|---|
| **Ֆինանսական միջոցների սակավություն** | Իրականացնել երկարաժամկետ և կարճաժամկետ ծախսերի ու պահանջների վերլուծություն: Կարճաժամկետ պահանջների մեջ ներառել այն ամենն ինչ առաջին անհրաժեշտություն է կրթության որակի բարելավման, երկարատևի մեջ, այն ինչը ցանկալի է ունենալ: |
| **Ուսուցիչների պասիվությունը , անվստահությունը նորարական մեթոդների արդյունավետությանը** | Հրավիրել մասնագետներ, կազմակերպել սեմինարներ, դասախոսություններ արդի մեթոդների կիրառման փորձի փոխանակման, գործնական հմտությունների փոխանցման նպատակով: |
| **Աշակերտների նախասիրություններին համապատասխան  մասնագիտական կրթություն ունեցող խմբակավարների պակաս:** | Ուսումնասիրել համայնքի մասնագիտական, մարդկայի ռեսուրսները, համագործակցել բուհերի հետ: |

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ, | Արդյունքների գնահատման չափանիշներ | Անբավարար /պլանավորված գործողություննները չեն իրականացվել / | Բավարար / իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ / | Լավ /իրականացվել են ամբողջությամբ, սակայն ակնկալվող արդյունքը մասամբ են ապահովել/ | Գերազանց /ամբողջությամբ իրականացվել են ամբողջությամբ և ապահոցել են ակնկալվող արդյունքն ամբողջությամբ |
|---|---|---|---|---|---|
| ➢ Ուսուցիչների մասնակցության խթանում սեմինարներին, վեբինարներին ՝ հեռավար կրթության հմտությունները կատարելագործելու նպատակով<br>➢ Ներդպրոցական / և ոչ միայն/ էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում, կիրառում<br>➢ Համակարգչային տեխնիկայի, թվային գրատախտակի , մարկերային գրատախտակների և այլ անհրաժեշտ միջոցների ձեռքբերում<br><br>➢ Խրախուսել, քաջալերել այն աշխատակիցներին ովքեր | ➢ ՏՀՏ կիրառմամբ դասերի, հեռավար դասերի /ըստ անհրաժեշտությա ն/ պլանավորում և իրականացում:<br>➢ Էլեկտրոնային պաշարներ<br>➢ Ձեռք բերված գույք | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| կարողանում են թեմաների ուսուցանման հետ միաժամանակ անդրադառնալ դրանց արդիականությանը  և հականում են , որ ուսուցչի դերը միայն դասավանդմամբ չի սահմանափակվում: Արդիական թեմաների ընտրություն/օր՝ մեդիագրագիտություն, բուլինգ, կիբերանվտանգություն, թրաֆիքինգ, ձեռնարկատիրություն, ֆինանսական պլանավորում և այլն/, դրանց ներառում ինչպես ուսուցման այնպես էլ դաստիարակության ընթացքում:<br>➢ Իրականացնել ստացված օրինակների դիտարկումներ, կիրառել ստացված փորձը նաև այլ թիրախային խմբերի համար:<br>➢ Դասալսումների արդյունքների հիամն վրա մանկավարժներին ցուցաբերվում է անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական աջակցություն | ➢ Իրականացված քննարկումներ դասեր, պաստառներ, էլեկտրոնային պաշարներ: Ձեռք բերված գիտելիքներ, համագործակցային միջավայր:<br>➢ Փոխադարձ դասալսումների արձանագրություններ<br>➢ Գործող խմբակների քանակ, երկաօրյա դասընթացների կազմակերպման հրամաններ<br>➢  Կրթության որակի դիտարկումների, առաջադիմության | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | առաջընթացի վերլուծությունները, օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում աշակերտների բարձ արդյունքները<br>➢ Դասալսումների քանակը, դիտարկումները | | | | |

**Նպատակ 6**

**Դպրոցի շահառուների իրազեկվածության բարձրացում, իրավական ակտերի քննարկումներին մասնակցության խթանում, փոփոխված և ընդունված տարբերակների իմացության մակարդակի բարձրացում**

| Խնդիրներ | Պատասխանատուներ | Ժամկետներ | Նյութատեխնիկական միջոցներ |
|---|---|---|---|
| 1. Շահառուների իրավական գրագիտության բարձրացում | Տնօրենություն, մեթոդմիավորման նախագահներ , խորհրդակցական մարմինների անդամներ, տարբեր կրթական կազմակերպություններ, իրազեկ անհատներ | 2023-2028 | Համակարգիչ, քննարկվող նյութի պատճենահանման նպատակով տպիչներ, թուղթ |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ գործողություններ |
|---|---|
| ➢ **Իրավական գիտելիքների պակաս կամ խնդրի կարևորության անտեսում** | Իրազեկել, տեղեկացնել, հետաքրքրել և ներգրավել քննարկումներում: Ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով: |

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ, | Արդյունքների գնահատման չափանիշներ | Անբավարար /պլանավորված գործողություններ չեն իրականացվել / | Բավարար / իրականացվել են թերի կամ ոչ արդյունավետ/ | Լավ /իրականացվել են ամբողջությամբ, սակայն ակնկալվող արդյունքը մասամբ են ապահովվել/ | Գերազանց /ամբողջությամբ իրականացվել են ամբողջությամբ և ապահովել են ակնկալվող արդյունքն ամբողջությամբ |
|---|---|---|---|---|---|
| ➢ Քննարկման փուլում գտնվող նախագծերի մասին տեղեկատվության տարածում<br>➢ Փոփոխված իրավական ակտերի վերաբերյալ քննարկումներ խորհրդակցկան մարմիններում, լուսաբանում՝ ինչն ավելի դյուրին կդարձնի իրավական ակտերի կիրառումը | ➢ Իրավական ակտերի իմացություն և գրագետ կիրառում<br>➢ Լիազոր մարմնին ներկայացված առաջարկներ: | | | | |

**Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ.**

1. **Գրենական պիտույքներ**
   ա/ թղթեր A4 և գունավոր թղթեր, կպչուն գունավոր թղթեր, մարկերներ, FLIP CHART /ֆլիպչարտ/
2. **Համակարգչային տեխնիկա**
   **ա/** էլեկտրոնային գրատախտակ/1հատ/, համակարգիչներ/ նվազագույնը` 5հատ/, դյուրակիր համակրգիչներ /3 հատ/, շարժական ձայնարկիչ,, միջին չափի էկրան ` պրոյեկտորի համար, շարժական ինտերնետ կապ, տպիչ սարքոր /2հատ/
3. **Դեղեր, դեղորայք**

   *ա/* ըստ սահմանված ցանկի,

*բ/* ջերմաչափեր՝ դասասենյակների և միջանցքների ջերմաստիճանը վերահսկելու համար։

4. **Քարտեզներ, պաստառներ, գրքեր**
   ա/ աշխարհի ֆիզիկական քարտեզ 1:20000000 գծաչափով, աշխարհի քաղաքական քարտեզ, ՀՀ մարզերի քարտեզ , Հայկական լեռնաշխարհի քարտեզներ, Հայստանը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում և այլ պատմական և աշխարհագրական խիստ անհրաժեշտ քարտեզներ
   բ/ Ուսումնական պաստառներ բոլոր առարկաների համար, հատկապեստարրական դասարանների և հնամաշ կենսաբանության պաստառների փոխարինման անհրաժռշտություն կա
   գ/ Ձեռնարկներ ուսուցիչների համար ` հատկապես նոր չափորոշչային պահանջներով դասավանդում իրականցվող դասարնների , նոր դասագրքերի
   դ/ գեղարվեստական գրականություն, պատմական գրականություն, անգլերեն գրականություն, ժամանակակից հանրագիտարաններ, արվեստի հանրագիտարաններ և այլն
5. Աշակերտական գույք ` հարմար տարրական և հիմնական կրթական աստիճանների աշակերտներին, գրադարանային գույք, պահարաններ /2 հատ/, ուսուցչական աթոռներ /14 հատ/

6. Դպրոցում սովորող երեք ԿԱՊԿ ունեցող աշակերտների կարիքներից ելնելով անհրաժեշտ են.
   ա/ պլաստիկե ուղղորդիչներ, բառերի բաժանարարներ, տեքստի նշիչներ, ուղղորդող պատուհաններ ընթերցելու համար, տեսողական ժամաչափ, ռետինե բռնակներ մատիտի և գրչի համար
7. Սպորտգույք ՝ հնարավորինս հետաքրքիր և անվտանգ ֆիզկուլտուիրայի դասեր կազմակերպելու համար : Անհրաժեշտ է նաև կրտսեր դպրոցահասկաներին հարմար սպորտգույք:

Նյութատեխնիկական բազայի նորացումը լիարժեք չի կարող լինել, եթե շենքային պայմանները չբարելավվեն և չստեղծվեն սպրորտդահլիճ կամ մարզադաշտ, լաբորատորիաներ, դասասենայկներ, լայն միջանցքներ ու դռներ, թեքահարթակներ և այլն:

**12. Վերահսկողության մեխանիզմներ**

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է կառավարման խորհուրդը (ԿԽ): Ծրագրի իրականացումը կարևոր է ուսումնական հաստատության առաքելության և կրթական գործընթացի կազմակերպման համար:
Դպրոցի առաքելությունը և Ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո: Ծրագրի փոփոխությունները պետք է արվեն գնահատման չափանիշների կատարման կամ չկատրման պատճառները բացահայտելուց հետո: Պատճառների բացահայտման փուլում անհրաժեշտ է ապահովել գործընթացի մասնակցայնությունը՝ ներգրավելով քննարկումներում աշխատակիցներին , խորհրդակցական մարմինների անդամներին, շահագրգիռ խմբերին:
Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին՝ տարեկան առնվազն երկու անգամ: Սրանով ապահովվում է հաշվետվողականությունը և գնահատվում է ծրագրից բխող տարեկան պլանավորումների արդյունավետությունը:Ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացվելու է հաստատության գործունեության տարեկան աշխատանքային պլանի կատարման մասին հաշվետվության հիման վրա:
Հաշվետվողականությունն ապահովելու նպատակով կկազմվեն հաշվետվության ձևեր, որոնք կներկայացվեն խորհրդի հաստատմանը՝ համաձայն տվյալ օրինակելի ձևի, թե Ծրագիրը և թե հաշվետվությունները կտեղադրվեն դպրոցի կայքում:

**Վերահսկողության մեխանիզմների ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումներն ու ակնկալվող արդյունքները.**

| | |
|---|---|
| 1. Զարգացման ծրագրի հիման վրա տարեկան աշխատնքային պլանների կազմում, տարվա կտրվածքով անելիքների հստակեցում, պլանավորում, ուստարվա ավարտին ՝ ամփոփում և արդյունքների ներակայցում շահագրգիռ կողմերին: | Համակարգված և տեսանելի աշխատանք |
| 2. Յուրաքանչյուր միջոցառման իրականացման արդյունքների ներկայացում, կամ չիրականացման պատճառների բացահայտում: Ըստ այդմ նպատակի առավել ճշգրիտ և իրատեսական սահմանում: | Բարեկարգ և անվտանգ կրթական միջավայր |
| 2. Նյութատեխնիկական բազայի հարստացում ՝ ըստ առաջնահերթությունների և ըստ ֆինանսական հնարավորությունների | Հագեցած, հետաքրքիր, ըստ կարիքների կահավորված ուսումնական միջավայր: |
| 3. Իրավական ակտերի փոփոխությունների և նախագծերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականցում | Իրազեկ և իրավագիտակից շահառուներ. Մասնակցային կառավարում |
| 4. Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավում | Որակական ցուցանիշների աճ, առարկայական օլիմպիադաներում, մրցույթներում, համապետական նախագծերում աչքի ընկնող և հաջողություններ ունեցող սաների թվական աճ: |
| 5. Ներդպրոցական վերահսկողության արդյունքների , տարեկան աշխատանքային պլանների հաշվետվությունների հրապարակում քննարկում | Կայքում տեղադրված նյութեր, արձանագրություններ՝ ընդունված որոշումների մասին որոնք պետք է նպաստեն կրթական բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը: |
| 6. Շահառուների կարծիքների վերլուծություն, որ հնարավորություն կտա գնահատել իրականացված միջոցառումների արդյունավետությունը: | Գաղափարների փոխանակում, ի շահ դպրոցի համագործակցային միջավայրի ստեղծում: |

Զարգացման ծրագրի կատարաման հաշվետվությունները սահմանված ձևաչափով են ներկայացվելու կառավարման խորհրդին և յուրաքանչյուր իրականացված միջոցառման առանձնահատկությունից բխող տեղեկանքները ներառվելու են հաշվետվությունների մեջ `կից տեղեկանքի կամ կցված այլ ձևաչափերի տեսքով:

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

| Հ/Հ | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |